№ 46 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 2

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 2 № 46

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սօնա, Մարգար, Սմբատ, Լևոն, Մարիամ, Կարինէ, Վառվառէ Խօջամիրեանցները և Թումիզար Յակովլեանը ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր սիրելի հարսի, երկրորդը իր անմոռանալի ամուսնու, երրորդը և վերջինը իրանց եղբօր կնոջ, միւսները իրանց թանկագին մօր և եօթներորդը իր սկեսուր՝

ԵՂԻՍԱԲԷԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԽՕՋԱՄԻՐԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 27-ին. հոգեհանգիստը այսօր երեկոյեան, ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը մարտի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Ալաբարսկի փող. № 9) դէպի Ս. Մինաս եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

2—2

Պատիւ ունեմ յայտնել յարգելի հասարակութեան, որ այս տարվայ մարտի 1-ից քաղաքի կենտրոնում, Վելեամինօվսկի փողոցում, Իգլբաշեվի կանդիտէրսկուն կից բացված է մաքուր և մատչելի ՃԱՇԱՐԱՆ

ԱՆԱՏՕԼԻԱ

Ամսական ճաշողներին տրվում են աբոնիմէնտներ։ Աշակերտներին և գրականագէտներին առանձին զիջում։

Յարգանքով Գասպար Տէր-Յովհաննիսեան

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Երբէք. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Հայ-Թուրքական համագումարը. Ականատեսի պատմածները. Մի բացատրական նամակ. Բագուի իրականութիւնից. Նամակ Նուխուց. Նամակ Գանձակից. Նամակ Խարբինից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատճառներ և հետևանքներ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք մի քանի անգամ հրաւիրել ենք մեր բաժանորդների ուշադրութիւնը այն բանի վրա, որ հասցէները պարզ և հասկանալի չեն գրված լինում։ Յաճախ ստացվում են այնպիսի հասցէներ, որոնցից անկարելի է լինում որոշել, թէ ով և ինչ քաղաքից է ուղարկել փողը և ինչ տեղ է ցանկանում «Մշակ» ստանալ։ Իսկ երբեմն գրում են այսպէս՝ «ուղարկեցէք մեր հին հասցէով», բայց թէ որն է հին հասցէն, յայտնի չէ, որովհետև ստորագրութիւնները լինում են շատ անորոշ։ Բացի այդ մի քանիսը խնդրելով փոխել իրանց հասցէները, փոխելու համար չեն ուղարկում 40 կոպէկ, մինչդեռ խմբագրութիւնը հասցէն փոխելու համար որոշ ծախքեր է անում։ Այդ հանգամանքները պատճառ են դառնում թիւրիմացութիւնների՝ օրինակ լրագրի ուշ ստանալուն։ Կրկին անգամ մեր բաժանորդների ուշադրութիւնն ենք դարձնում այդ հանգամանքների վրա, աւելացնելով, որ լրագրի ուշ ստացման պատճառներից մէկն էլ այն է, որ այստեղի պօստում ուշ են ստացվում ուղարկած գումարները։

ԵՐԲԷՔ

Անշուշտ, որքան մենք բաղդաւոր կը լինէինք, եթէ կարողանայինք լի բերանով, կատարեալ վստահութեամբ և համարձակ ասել հային՝ այո, խաղաղութիւնը ապահով է և դու հանգիստ ու անվրդով կերպով կարող ես նուիրվել քո գործին։

Մանաւանդ կը ցանկայինք այդպէս ասել, որովհետև մենք միշտ համարել ենք հայ-Թուրքական ընդհարումները անմիտ, անբովանդակ, աննպատակ, վտանգաւոր, կռուող կողմերից երկուսի համար էլ։ Եւ ուրեմն զոհերը չունեն բարձր բարոյական արդարացում։ Նրանք զոհեր են, դժբաղդ զոհեր, արդիւնք այն չար խաղի, որին մասնակցեցին Թուրք մասսաները չմբռնելով թէ ինչ մեծ և անծայր թըշւառութիւն են նրանք բերում հայրենիքին, որ և իրանց հայրենիքն է։

Հայ-Թուրքական խորհրդակցութեան նիստերում երևում է, որ Թուրքերը սկսել են գիտակցել այն մեծ վտանգը և դժբաղդութիւնը, որ առաջացել է իրականութեան մէջ ընդհարումների շնորհիւ, բայց նրանք ամենևին տրամադրութիւն չեն ցոյց տալիս մի նշանախեց անգամ փոխելու այն դիրքից, որ նրանք բռնել են հայերի վերաբերութեամբ։ Նրանք շարունակում են առասպելներ պատմել հայերի մասին և աշխատում են դրանով տպաւորութիւն գործել որոշ շրջանների վրա։

Սակայն այն, ինչ որ անհիմն է և խախուտ, այնպէս էլ կը մնայ անհիմն և խախուտ։ Իսկ սպասել, որ մենք մեզ կը դաւաճանենք, սևը կը սպիտակացնենք և սպիտակը կը սևացնենք, դրանք սխալ ակնկալութիւններ են։

Թուրքերը կարող են հնարել, որ իբր թէ հայերն են նախայարձակ եղել Թուրքերի վրա, որ հայկական սպանութիւններն են գրգռել Թուրքերին, որ տէրրօրն է նրանց վրդովեցրել, որ հայկական յեղափոխութիւնն է Թուրք մասսաներին ոտքի կանգնեցրել, որ հայ հասարակութիւնը, հոգևորականութիւնը և մամուլն են պատրաստել հող փոխադարձ դժգոհութեան և թշնամութեան համար, այդ բոլորը կը մնայ մի խոշոր զրպարտութիւն, մի խոշոր կեղծիք, որը նոյնպէս օդը կը ցնդէ, ինչպէս և նախկին այն բոլոր զրպարտութիւնները և կեղծիքները, որոնց հետ մենք գործ ենք ունեցել վերջին երկու տասնեակ տարիներում։

Հայ-Թուրքական խորհրդակցութեան ընթացքում Թուրքերը ցանկանում են միջնորդի դեր վերցնել իրանց վրա, բայց այդ չէ աջողվում և իւրաքանչիւր միջնորդանք մի բարոյական դատապարտութիւն է դառնում նրանց համար, նրանց դրդումների և ներքին շարժառիթների համար։

Եւ միթէ այդպիսի, եթէ չասենք դիտաւորեալ, գոնէ չափազանց պարզամիտ ու միամիտ կերպով կարելի է մօտենալ հայ ժողովրդին և խօսել նրա հետ և կարծել թէ դիմացինը մանուկ է և մանկական օրօրներով կարող է մխիթարվել։

Մենք ուզում ենք գիտակցական ժողովուրդ լինել և ազատ մեր ներքին գործառնութիւնների, մտածողութեան, տրամադրութիւնների մէջ։ Մեր հասարակական կեանքը, մեր մամուլը, մեր հիմնարկութիւնները, մեր զանազան տեսակ կազմակերպութիւնները մեր գիտենալու գործերն են։ Եւ ոչ ոք իրաւունք չունի ձեռնամուխ լինել այն բանին, ինչ որ մեր երևակայութեանն և մեր բարոյական ազատութեանն է վերաբերում։ Իսկ ամեն մի օտար մարդու, որ կը ցանկանայ քիթ խոթել մեր գործերի մէջ և մեր բարոյական ինքնուրոյնութիւնը շօշափել, մենք նրանց կը կրկնենք Գլադստօնի խօսքը. «Hands off»—Քաշէք ձեռքներդ!

Մենք ձեր ներքին անհատականութեան չենք ցանկանում դիպչել, դուք էլ նոյնը պէտք է անէք մեր վերաբերութեամբ։

Դա չափազանց պարզ և հասկանալի ճշմարտութիւն է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարանա, Ղազախի գաւ. փետր. 26-ին։

Փետրվարի 23-ի երեկոյեան պատահմամբ գնացի Բարանա և ինչ տեսայ։ Բարանի մէջ լցված էին կանայք, երեխաներ, որոնց լացն ու ճիչն երկինք էր բարձրանում։ Ես կարծեցի թէ Թուրքերը նորից յարձակվել են մի որ և է գիւղի վրա և սրանք փախուստ են դիմել։ Բարանի հաւանոցներն էլ տաւարով և ոչխարով լցվել էին, վերջապէս մի կերպ իմացայ, որ եկողները Կողբի գիւղացիներն են և ոչ թէ Թուրքերն են յարձակվել, այլ կօզակներն են երկու թնդանօթներով եկել Կողբը ռմբակոծելու և մէկ անգամ արձակել են. բայց ինչ էր պատճառը, որ Կողբը մոխիր պիտի դառնայ. ահա թէ ինչ։ Կողբից 15 վերստ հեռաւորութեամբ գտնվում է «Ղիասի-Քար» ձմերանոցը. սրանից 5 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է և Շիլու Թուրք գիւղը։

Թուրքերը տեսնելով, որ հայերը հեռացել են զոմերից, սայլերով և զինված՝ գնում են խոտերը և գերանները գողանալու։ Այդ օրը ինչպէս է պատահել, երևի իրար մէջ վէճ է ծագել, թէ ով ինչ պիտի տանէ և սպանվել է մի Թուրք, երկու եզ, երկու էլ գոմէշ, և 5 օրից յետոյ գնացել են և պրիստաւին յայտնել թէ հայերը, Կողբ գիւղացիները, փայտի գնալիս յարձակվել են Թուրքերի վրա և սպանել, իմանալով, որ գնդապետ Լէվիցկու կարգադրութեամբ, որ գիւղի սահմանում մարդ սպանվի այն գիւղից պիտի առնվի 3000 ռ. տուգանք սպանվածի համար, որքան հրացան գտնվի, իւրաքանչիւրին 500 ռ. տուգանք։

Եկաւ պրիստաւը և կօզակների մէկ օֆիցէր և քննութիւն կատարեցին։ Վկան Թուրքի կին է. նա իբր թէ ճանաչել է, որ սպանողը եղել է Կողբ գիւղացի Աւետիք Ազատեանցը, որի առաջին երկու կտրիչ ատամները կոտրած են։ Հայերը եղել են 7 հոգի։ Պրիստաւը յիշեալ Աւետիքին բերեց և տեսաւ, որ կոտրած ատամներ չունի և թէ Աւետիքը երկու ամսից աւելի է, որ Շամուտում անտառապահ է եղել։ Աւետիքը յայտնի մարդ է և ամբողջ Բորչալուի և Ղազախի գաւառների Թուրքերը ճանաչում են։ Ահա, այդ ճանաչելու պատճառով էլ խեղճը այս փորձանքի մէջ է ընկել։ Եղելութիւնը յայտնել են գնդապետին, որը ժամանակ էր տուել կամ 3000 ռ. փող, 7 հոգի և 8 հրացան, իսկ հրացանների համար 4000 ռ. տուգանք։ Բայց երբ հայերի գործ չէր, ինչպէս տային պահանջածը. որոշած ժամանակից յետոյ եկան կօզակները թընդանօթով և պահանջեցին թէ փողն և թէ մարդկանց հրացանները։ Աւետիք Ազատեանցը առաջ եկաւ և ասաց, «որ ես եմ, ում դուք անուանում էք, ես այդ գործի մասին տեղեկութիւն չունիմ, բայց եթէ իզուր տեղը մեզ ուզում էք պատժել, ես պատրաստ եմ իմ կեանքը զոհելու այն անմեղ, լեղապատառ երեխաներին»։ Քննում և տեսնում են, որ Թուրքերի ասածը չէ, իսկ անուան տալը ճանաչելուց է։ Երեքչորս անգամ թնդանօթների բերանները ուղղում են դէպի տները, բայց հայերի խնդիրքին զիջանելով, նորից ժամանակ են տալիս. որոշեցին առայժմ 3000 ռ. փող և երկու մարդ տանել. երկուսի անունն էլ Աւետիք է և Ազատեանցներից են։ Մարդկանցը պիտի տանեն գնդապետի մօտ՝ Ղազախ։

Մելքումեան

Շուլաւէր, փետրվարի 26-ին.

Այսօր պատմեցին ինձ, որ երէկ 3 հայեր Բօլնիս-Խաչէնից գալիս են լինում Շուլաւէր. ճանապարհը անցնում է Փախրալու կոչված Թուրք գիւղի մօտով. երբ վերոյիշեալ հայերը մօտենում են այդ գիւղի տափարակին, նրանց շրջապատում են Իմերհասան գիւղի Թուրքերը և կամենում են սպանել նրանց։ Հայերը լինում են անզէն։ Խառնաշփոթ դրութեան մէջ, հայերից 2-ը փախչում են դէպի Շուլաւէր, իսկ 1-ը դէպի Բօլնիս-Խաչէն։ Վերջինիս ետևից են ընկնում Թուրքերը և սկսում են հրացան արձակել նրա ետևից։ Բարեբաղդաբար, ճանապարհին պատահում է այս փախչող հային մի ծանօթ Թուրք, որը, ինչպէս ասում են, լինում է Փախրալու գիւղի տանուտէրի եղբօրորդին, և ազատում է նրան ու ճանապարհում Շուլաւէր։

Սրանով երկրորդ դէպքն է այդ մի և նոյն ճանապարհի վրա, բայց և այնպէս մինչև այժմ ոչ մի միջոց չէ ձեռնարկվում սրա առաջն առնելու համար։

Արդէն այստեղ հրատարակված է զինւորական դրութիւն և զինաթափութիւն։ Զինաթափ են անում հայերին և Թուրքերին (?)։ Հայը ոչ մի զէնք չունի, որ ճանապարհի յարձակումներից պաշտպանվի, որովհետև խլում են, իսկ Թուրքերը գալիս-գնում են զինված, առանց քաշվելու, և ահա այդ պատճառով էլ պատահում են այսպիսի ցաւալի դէպքեր։

Եթէ իսկապէս զինաթափ են անում, պէտք է ուրախ լինենք, որ հանգստութիւն կը լինի, բայց ընդհակառակը, տեսնում ենք, որ մէկ ազգութիւն աւելի է ճնշվում, անզէն լինելով կողոպտվում է քան միւսը։ Ցանկալի էր, որ կառավարութիւնը ուշք դարձնէր երկրի այսպիսի դրութեան վրա. հայը հաւատացած, որ իսկապէս զինաթափ են բոլորը, դուրս է գնում իր գործին անզէն, բայց բանից դուրս է գալիս որ, միմիայն հայն է զինաթափ արված—մնացած բոլորը զէնք ունեն։

Ցոլակ

Բագու, 28 փետրվարի.

Փոխարքան ծանուցագրել է բոլոր գեներալ-նահանգապետներին, որ այն տեղերում, ուր տեղի ունի կամ գուցէ տեղի կունենայ հայ-Թուրքական կոտորած, խիստ կերպով պատժեն վարչական միջոցներով բոլոր յարձակվողներին և կողոպտողներին՝ առանց ազգի խտրութեան և հսկողութիւն ունենան իրանց նահանգի վարչական պաշտօնեաների վրա, որպէս զի նրանք կողմնապահութիւն չունենան այս կամ այն ազգութեան վերաբերմամբ նախազգուշացնելով որ՝ կողմնապահութեան դէպքում նրանք անմիջապէս կարձակվեն իրանց պաշտօններից։

Սէվաստօպօլ, 28 փետրվարի։

Դատարանը յարգեց Շմիդտի և միւս մեղադրեալների պաշտպանների միջնորդութիւնը և վճռաբեկ բողոքի ժամանակամիջոցը յետաձգեց մինչև մարտի 2-ի կէս գիշերվան։

Ներկայումս Թիֆլիսի նահանգական զինւորակոչութեան գործի առանձին մշտական անդամ փոխ-գնդապետ Դուբանիսի նախագահութեամբ, աշխատում է մի առանձին մասնաժողով որոշել ու Կարայազի մասի բնակիչների հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ կրած վնասները։ Այդ յատուկ մասնաժողովը, որ գնացել էր Կարայազ, լուսաբանել է, որ ջարդեր ու վնասներ տուել են տեղական Թուրքերը և ոչ թէ ուրիշ տեղից եկածները։

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ուղիղ մի տարի առաջ գուրիացիները ուրախ ու զուարթ դիմաւորեցին Սուլթան-Կրիմ-Գիրեյին, որ ուղարկված էր այնտեղ առանձին միսիայով և առաջին անգամ թոյլատրված ժողովրդական միտինգներում ասում էին իրանց սրտում եղածը, համարձակ ու ազատ խօսում էին իրանց կարիքների մասին։ Ինչպիսի ցնծութեամբ, ինչպիսի ջերմ ակնկալութեամբ էին նրանք վերաբերվում դէպի լուսաւոր ապագան այն ժամանակ, իսկ այժմ ամենքն էլ յուսախաբ, սարսափած ու վհատված են։ Սպանութիւններ, հրդեհումներ, թալան, կալանաւորութիւններ—ահա թէ ինչն է կազմում օրվայ չարիքը։

Բոլոր համայնքները հնազանդութիւն են յայտնել և յանձնել զէնքերը։ Մի մարդ համոզել է գնդապետ Կրիլօվին, որ Սուրէբսկի համայնքում մեծ քանակութեամբ զէնք և ռազմամթերքներ են պահել։ Նա նորից է պահանջում այդ համայնքից զէնքերը յանձնել, իսկ դրա համար առայժմ պահում է 10 մարդ իբրև պատանդ։ Պատանդներ է պահում նա Բասիլէթսկի համայնքից նոյնպէս։ «К.У.»

Իմէրէթ։ Այն տանջանքները և վնասները, որոնց ենթարկվեց Շորապանի գաւառը զինւորների կողմից, ինչպէս երևում է, դեռ չը մնացին նրանով։ Երկու ժամ միայն մնացի Շորապան գաւառի մայրաքաղաք Ջէստաֆօնում և այնքան սրտաճմլիկ տեղեկութիւններ լսեցի, որ մարդ չէ իմանում, թէ ինչին վերագրէ—քաղաքագիտութեանն, թէ մի նախապատրաստված ծրագրի՝ ժողովրդին հոգի հետ հաւասարեցնելու համար։ Որպէս զի իմ ասածները չափազանցրած չը կարծէք, փաստեր առաջ կը բերեմ։ Փութի գիւղում փետրվարի 19-ին տեղացի Ալէքսի Թիթբերիձէի մօտ զինւորներ եկան և նրա տունը բոլորովին ոչնչացրին։ Ինչու կը հարցնի ընթերցողը. ուղղակի պատասխանել այդ հարցին, ես էլ չեմ կարող, բայց ժողովրդի մէջ լուր է պտտում, որ Թիթբերիձէի տունը ոչնչացնելու պատճառը նրա որդիքն էին, որոնք ինչ որ մի յանցանքում մեղադրվում են, բայց զինւորները չեն կարողանում գտնել նրանց։ Նոյն վիճակի մէջ ընկաւ Վ. Խէիձէն, որին բանտարկեցին։

Դիլիկաուրի գիւղը իր խաղաղ բնակիչներով մինչև փետրվարի 20-ը ըմբոստանում էր։ Այդ օրը գիւղումը երևաց 20 զինւոր օֆիցէրի ղեկավարութեամբ. մի քանի մարդու կալանաւորեցին և ուղարկեցին Ջէստաֆօն. Ինչ պատահեց գիւղում, դժուար է նկարագրել—զինւորների երևալը և գիւղի ահաբեկումը մի եղաւ։ Գիւղի բնակիչների մեծ մասը, գլխաւորապէս կանայք երեխաներով հեռացան գիւղից, հետը վերցնելով ով ինչ կարողացաւ։ Գիշերը գիւղում կրակ երևաց. քիչ ժամանակից յետոյ կրակը լուսաւորեց ամբողջ գիւղը. այրվեց 7 բնակիչ—Ցերցվաձէ, Սվիանաձէ և Սացէրաձէ։ Նոյն գիշերը սպանեցին տեղացի Լոմիաձէին։

Դելիկաուրայից զօրքը տեղափոխվեց Թերժօլա գիւղը. այստեղ էլ կալանաւորեցին մի քանի մարդ, այրեցին մի քանի տներ. այդ մի և նոյն գիւղում փետրվարի 24-ին կօզակները անց կացրին Ալիսուբանի գիւղական ուսումնարանի ուսուցչին, որին ձերբակալելու ժամանակ սաստիկ ծեծել էին և յետոյ՝ ձիաւոր կօզակները առով բերել էին։

Նոյն զինւորների խումբը և կօզակների մի հարիւրեակ, մի քանի օրից յետոյ այցելեցին Սազանօ գիւղը, որի բնակիչներից իսկոյն պահանջեցին իրանց յանձնել 7 մարդու, այրեցին Նէբուրիձէի տունը, անխիղճ կերպով ծեծեցին Նասրաձէին, բայց ինչ է սպառնում այդ գիւղին, Աստուած գիտէ։ Զօրքը իջևանում է տեղացի Քավթարաձէի տանը։ Նոյն Սազանօ գիւղին մեղադրում են, թէ իբր նրանք պահում են միլիցիօներներին և ագիտատօրներին, և այդ պատճառով գիւղի վրա տուգանք նշանակեցին 1000 ռուբ. և այդ գումարը, մինչև մարտի 1-ը յանձնել գանձարանին. «Չը գիտենք, ինչ անենք—ասաց Սազանօ գիւղի բնակիչներից մէկը—մեր կաշիները քերթերին, հնազանդութիւն յայտնեցինք և հաստատեցինք նրանով, որ ինչ պահանջեցին, բոլորը կատարեցինք, բայց ոչինչով մեր վիճակը չը բարուքվեց։ Եթէ այսպէս շարունակվի, կամ ջուրը պէտք է ընկնենք, կամ մեր ձեռքով պէտք է մեզ մորթենք. միթէ այսպէս անտէր պէտք է լինենք, և ոչ ոք օգնութեան համար ձեռք չը պէտք է մեկնէ»։

Ես յուսատու ոչինչ չը կարողացայ ասել. ինձ հետ խօսող գիւղացին վերջացրեց հետևեալ խօսքերով. «մեզանից Աստուածն էլ ձեռք է վերցրել, մարդն էլ»։

(Ցնօբիս Փուրցէլի)

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Փետրվարի 28-ի նիստը

Նախագահ Մալամա, ժամը 2-ին բանալով խորհրդակցութեան եօթներորդ նիստը, յայտնեց, որ քննվելու է հայերի ծրագրի 4-րդ կէտը—«Շուտափոյթ արդարադատութեան հարցը, կազմակերպութիւն տեղական միջնորդ դատարանների»։

Ս. Յարութիւնեան, մի մանրամասն ճառով բացատրում է, թէ մինչև որ ազգաբնակութեան չը ներշնչվի այն միտքը, թէ կայ օրէնք, կայ արդարութիւն, թէ կարգի և օրէնքի ամեն մի խախտումն արժանաւորապէս կը պատժվի, չէ կարելի յուսալ, թէ ցաւալի դէպքերը այլ ևս չեն շարունակվի։ Դատաստանը պէտք է լինի արագ, այլապէս բարոյական վարակումը կը տարածվի աւելի լայնօրէն և ազգաբնակութեան մէջ կարմատանայ այն համոզմունքը, թէ ջարդերը, աւերումները կատարվում են իշխանութեան համաձայնութեամբ։

Ապա ճառախօսը ապացուցեց, որ ինչպէս վարչական իշխանութիւնները, նոյնպէս և դատաստանական իշխանութիւնները, նաև պրօկուրօրական իշխանութիւնը ցաւալի դէպքերի ժամանակ ամբողջ 13—14 ամսվայ ընթացքում կանգնած չէին իրանց կոչման բարձրութեան վրա, ոչ մի յանցաւոր, ոչ մի հրկիզող, կողոպտող չէ պատժված, ոչ մի գործ դեռ չէ քննված դատարաններում։ Այդ անօրմալ վիճակը պէտք է վերացնվի։ Թէև դատաստանական գործը հանված է Փոխարքայի իշխանութիւնից, բայց Փոխարքան դարձեալ շատ բան կարող է անել, հրաւիրելով արդարադատութեան մինիստրութեան ուշադրութիւնը գործի այդ կողմի վրա. օրինակ, կարելի էր աւելացնել քննիչների շտատը, հրաւիրելով ուրիշ դատաստանական շրջաններից, կարելի էր մտցնել ընտրեալ հաշտարար դատաւորների, երդուեալ դատաւորների ինստիտուտները և այլն։ Սակայն մինչև այդ միջոցների իրագործումը, որ բաւական երկար կը տևէ, անհրաժեշտ է անյապաղ հաստատել ժամանակաւոր միջնորդ դատարաններ, տալով նրանց որոշումներին պարտադիր զօրութիւն։

Պետերսօն մի քանի նկատողութիւններ է անում, թէ օրէնքը արդէն նախատեսել է միջնորդ դատարանները, փոխադարձ համաձայնութեամբ, թէ դատաստանական իշխանութիւնները մեղադրելը անհիմն է, քանի որ նրանք հիմնում են իրանց որոշումները ոստիկանութեան նախնական քննութեան վրա և խնդրում է, որ Ս. Յարութիւնեանը, իբրև իրաւագէտ, մի քանի բացատրութիւններ տայ։

Ս. Յարութիւնեան տալիս է այդ բացատրութիւնները, ասելով, որ օրէնքով նախատեսված միջնորդ դատարանները շատ ձևակերպութիւններով են պայմանաւորված, պէտք է հաստատել ուրիշ տիպի դատարաններ խաղաղարար բնաւորութեամբ, բայց նրանց որոշումներին տալ պարտաւորական զօրութիւն։

Այդ խնդրի մասին հետզհետէ խօսում են պ. պ. Թօփչիբաշեվ, Ջիւախանով, Մելիք-Բէգլարեան, Հաջիեվ, Պետերսօն, Լազարեան, Տէր-Աւետիքեան, Ա. Խատիսեան, Աղայեվ և Քալանթար։ Գրեթէ մեծ մասը չեն հերքում այն իրողութիւնը, որ դատաստանական գործը անբաւարար վիճակի մէջ է գտնվում և դատաստանական իշխանութիւնները իրանց կոչման բարձրութեան վրա չեն կանգնած։

Թօփչիբաշեվ գտնում է, որ Կովկասի վերաբերմամբ շատ բացառութիւններ են կատարված ընդհանուր դրութիւնից և հէնց այդ բացառութիւնները արտադրել են անտանելի հետևանքներ։ Գործի համար պէտք է անմիջապէս մտցնել երդուեալների դատարան և դատաստանական ոստիկանութիւն, վերակազմել նախնական քննութեան գործը, յանձնել քննիչների պաշտօնը փորձված անձանց, որոնք ծանօթ են տեղական բարքերին, սովորութիւններին, լեզուին և այլն։ Ինչ վերաբերում է միջնորդ դատարանների հաստատութեան, մուսուլմաններն ևս ցանկանում են այդ, ինչպէս կարելի է տեսնել իրանց ծրագրի 6-րդ կէտից։

Ջիւախանօվ, գտնում է, որ արդարադատութեան հասցէին արած յանդիմանութիւնը դանդաղութեան մասին, անարդար է. դատաստանական իշխանութիւնները չէին կարող առանձին եռանդով գործել, որովհետև անկարգութիւնների պատճառով վկաները չէին գալիս։ Ճիշտ է, օրէնքը նախատեսնում է միջնորդ դատարանները և այդ նկատումներով նոյն իսկ հաստատված է պատուաւոր հաշտարար դատաւորների ինստիտուտը, բայց այդ դատաւորները կեանքից հեռու են կանգնած։ Օրինակ, Գանձակում չը կայ մի հատ մուսուլման պատուաւոր հաշտարար դատաւոր, թէև ժողովրդի մեծամասնութիւնը մուսուլման է։

Հաջիեվ ցոյց է տալիս, որ քննիչները ոչինչ անել չէին կարող. «ես ինքս ականատես էի, երբ քննիչը, գալով տեղը և գտնելով մի դիակ, հարցրեց շրջապատողներին. ով է սպանել, և ոչ ոք մի խօսք անգամ չասաց։ Ուրեմն ում համար նա պրօտօկօլ պէտք է կազմէր, միթէ լապտերային սիւնի համար»։ Ճառախօսը շեշտում է այն հանգամանքը, որ հասարակութիւնը չէ կամենում նպաստել իշխանութիւններին քննութեան գործի մէջ։

Պետերսօն։ Ներկայ ժողովի զբաղմունքների մէջ կարմիր թելով անցնում է մի առանձնայատկութիւն. հայ պատգամաւորները ամեն անգամ շեշտում են իշխանութիւնների թերութիւնները, իսկ մուսուլման պատգամաւորները եթէ չեն արդարացնում իշխանութիւնները, բայց նրանց թուլութեան արդարացումն գտնում են իշխանութեան մի քանի գործողութիւնների մէջ, այսինքն բացատրում են պատճառները։ Եւ իրօք, ինչ կարող է անել իշխանութիւնը, երբ հասարակութիւնը իր բարոյական պարտքը չէ համարում նպաստել նրան։ Անգլիայում, օրինակ, ամենևին վատութիւն չի համարվում, երբ մէկը ցոյց տայ գողին, մարդասպանին, այլ քաղաքացիական առաքինութիւն։

Մ. Լազարեան բերում է օրինակներ Գանձակի դէպքերից, երբ քննիչի, պրօկուրօրի աչքի առաջ կատարվում էին հրդեհաձգութիւններ, կողոպտումներ, ջարդեր և նրանք ոչ մի միջոց ձեռք չէին առնում, այլ անցնում, գնում էին։

Ա. Խատիսեան նկատում է, որ պ. Պետերսօնի արած յանդիմանութիւնը հասարակութեան հասցէին, անարդար է։ Հասարակութեան կարծիքի արտայայտիչը—մամուլն է. մամուլը ամբողջ մի տարի մատնացոյց էր անում մեղաւորներին, յականէ յանուանէ, փաստերով և մեղաւորները ոչ միայն չէին պատժվում, այլ երբեմն նոյն իսկ պաշտօնով և աստիճանով բարձրացնվում էին, շքանշաններ էին ստանում։ Հասարակութիւնը ուրիշ միջոցներ չունէ իշխանութեան աջակցելու համար։

Աղայեվ գտնում է, որ չէ կարելի ղեկավարվել լրագրական տեղեկութիւններով. այնտեղ, ուր լրագիրները բաժանվել են երկու թշնամական բանակների, այնտեղ իշխանութիւնները չը պէտք է հաւատան նրանց տեղեկութիւններին։ Իբրև օրինակ բերում է «Մշակից» մի լուր իրա Աղայեվի Շուշի գնալու մասին, որ տեղի չէ ունեցել։ Ապա նա գտնում է, որ իշխանութիւնները ցաւալի դէպքերի ժամանակ արել են, ինչ կարողացել են։ Գալով դատաստանական գործի դրութեան Կովկասում, ճառախօսը գտնում է, որ նա չէ համապատասխանում կեանքի պայմաններին և իբրև մի մեծ չարիք ցոյց է տալիս փաստաբանների, մանաւանդ «աբլակատների» գործունէութիւնը, որոնց համար ոչ մի էտիկա չը կայ, նրանք ամեն տեսակ միջոցներ են գործադրում, սովորեցնում վկաներին սուտ խօսել և այլն։

Ալ. Քալանթար։ Աղայեվը այսօր դարձեալ փորձ է անում անտեղի յարձակումներ գործել և խանգարել մեր պարապմունքները։ Ես նրան կարճ կը պատասխանեմ։ Աղայեվի մասին լուրը տպել էր ոչ միայն «Մշակը» այլ և ուրիշ լրագիրներ։ Այդ մէկ։ Յետոյ ինքը Աղայեվը իր օրգանում թոյլ էր տուել Մելիք-Աղամալեանի մասին լուր տպել, որ նա իր երևանեան կալուածքում յարձակողական շարժումներ է պատրաստում. մինչդեռ Մելիք-Աղամալեանը այդ ժամանակ նոյն իսկ Երևանումը չէր, այլ Թիֆլիսում։ Այժմ մի քանի խօսք Փոխարքայի դիւանատան դիրեկտոր Պետերսօնի ասածների առթիւ։ Նա ասում է, որ հայերը շարունակ քննադատում են պետական օրգանները, իսկ Թուրքերը մեղմ են վերաբերվում։ Մենք պատգամաւորներս սպասում էինք պետութեան ներկայացուցիչներից, որ մեզ ասէին. «ասացէք ազատ կերպով ձեր ասելիքը և եղէք անկեղծ ու շիտակ», իսկ մեզ այսօր ուրիշ բան են ասում։ Մեզ հրաւիրել է Փոխարքան, մեզ նախագահում է նրա օգնականը։ Մենք ժողովրդի ներկայացուցիչներ ենք. և եկել ենք պարզօրէն ասելու ամեն բան, ինչպէս որ մենք հասկանում ենք և թելադրում է մեր խիղճը։ Եթէ մենք խօսում ենք պետական օրգանների մասին, այդ այն պատճառով է, որ ներկայ հայ-Թուրքական կնճռոտ հարցի լուծման մէջ դեր պէտք է կատարեն ոչ միայն հայերը և Թուրքերը, այլ և կառավարութիւնը: Եթէ այդ երեք փակտորներից մէկը ցանկանայ խանգարել գործին, հարցը չի լուծվի: Մենք պարտաւոր ենք խօսել վարչական գործունէութեան մասին: Եթէ խորհրդակցութեան հայ անդամներս մի յայտնելիք միայն ունենք, այն է, Թէ քանի որ մենք այստեղ մասնակցում ենք իբրև հայ պատգամաւորներ, մենք հաւատարիմ կը մնանք մեզ և կը շարունակենք խօսել այն շիտակութեամբ և անկեղծութեամբ, որ պատուիրում է մեզ ժողովրդի կողմից մեր վրայ դրած յանձնարարութիւնը: Մենք մեզ չենք դաւաճանի:

Նախագահ Մալամա յայտարարում է, որ ժողովի արդիւնաւորութեան գլխաւոր պայմանը—խօսքի ազատութիւնն է, ուստի խնդրում է ոչ մի բանից չը քաշվել և խօսել ազատ:

(Հայերի կողմից ընդհանուր և բուռն ծափահարութիւններ են լինում):

Ապա նախագահը ձևակերպում է եղած վիճաբանութիւնների եզրափակումն այս ձևով. ցանկալի է արագ դատաստան, ընտրեալ դատաւորներ, նախնական քննութեան գործի բարւոքումն, երդուեալ դատաւորների և դատաստանական ոստիկանութեան մտցնելը, դատաւորների կազմը աւելացնելը, Թարգմանների ինստիտուտը բարւոքելը և փաստաբանութեան մասնակցութիւնը նախնական քննութեան մէջ:

Հետևեալ 5-րդ և 6-րդ կէտերը հայերի ծրագրի, այն է «շինական վարչութիւնների բայօնների նոր դասաւորում» և «վարչութեան կողմից վճռական միջոցների գործադրութիւնը» չեն քննվում, ի նկատի ունենալով, որ երկրորդի մասին արդէն խօսվել է, իսկ առաջին հարցը արդէն քննվում է նահանգական ատեաններում:

Ժողովը անցնում է 6-րդ կէտի քննութեան. այն է «Որոշումն և պահանջումն վնասների քաղաքներում և գիւղերում առանձին մասնաժողովների ձեռքով, կազմված իշխանութեան ներկայացուցիչներից և ժողովրդի ընտրեալներից»:

Պէտք է ասենք, որ այս կէտը և հայերի այս պահանջը սաստիկ դիմադրութեան հանդիպեց Թուրք պատգամաւորների կողմից:

Ս. Յարութիւնեան հաստատում է Թէ երկիրը, որպիսի հսկայական վնասներ կրեց և գտնում է, որ այդ վնասների հատուցումը անհրաժեշտ է երկու պատճառներով. 1) վնասվածներին գոհացումն տալու համար. 2) յանցաւորներին պատժելու և դրանով յետ պահելու նրանց ջարդերի կրկնութիւնից: Դատարանով վնասներ պահանջելը զուր է. դրա համար պէտք է հաստատել առանձին կարգ վարչական՝ ժողովրդի ընտրեալների մասնակցութեամբ: Անհրաժեշտ է, որ համայնքները պատասխանատու լինեն պատճառած վնասների համար: Համայնքները գիտեն իրանց անդամներին և կը բաժանեն վնասները իսկական յանցաւորների մէջ: Սակայն մի կողմից էլ անյարմար է պահանջել համայնքներից վնասների ամբողջ գումարը միաժամանակ, որովհետև այդ կը նշանակէր բոլորովին աղքատացնել նրանց, ուստի աւելի նպատակայարմար է, համաձայն մեր ծրագրի 10-րդ կէտին, որ կառավարութիւնը օգնութեան հասնէ. այն է ի հաշիւ յանցաւոր համայնքներից ստանալի վնասների, այժմ իսկ փոխ տալ գանձարանից անորոշ ժամանակով գումարներ վնասվածներին: Համայնքները, ի հարկէ, կարող են մասնակից անել վնասներին և արտօնեալ դասակարգերը, այն է աղալարներին և բէկերին, որոնք մեծ դեր են խաղացել գործերի մէջ: Այս խնդրի հետ սերտ կապ ունի և մեր ծրագրի այն կէտը, որ առաջարկում է թեթևացնել հարկերի վճարումը: Շատ գիւղեր բոլորովին աւերված են, նրանց համար պէտք է յետաձգել հարկերի վճարումը:

Զիւատխանով գտնում է անհնարին դատաստանական ֆունկցիաները վարչութեան յանձնելը, դա կը լինէր յետադիմութիւն: Վարչութիւնը չունի արդարադատութեան այնպիսի երաշխաւորութիւն, ինչպէս դատարանը: Չէ՞ որ մուսուլմանները նոյն չափ կորցրել են ինչքան և հայերը—և սակայն մենք հակառակ ենք վնասների պահանջման, որովհետև դա անհնարին է, քանի որ աւերումը ընդհանուր է: Պահանջել կարելի է միայն յանցաւորներից. Թող դատարանը որոշէ ամեն մէկի յանցանքը և պահանջէ նրանից, իսկ պահանջել վնասները ամենից—անարդարութիւն է: Ջարդերի ժամանակ հարստացել են միայն խուլիգանները, նրանք յափշտակել են գոյքերը և ծախել չնչին գնով, և այժմ դուք կամենում էք, որ նրանց տեղ վճարեն այն տարրերը, որոնք չեն մասնակցել այդ աւարառութեան: Եթէ համաձայնենք հայ պատգամաւորների պահանջին, դուրս կը գայ մի մեծ անարդարութիւն և դրանից կը ծագեն գուցէ ուրիշ և նոր ջարդեր:

Կ. Խատիսեան գտնում է, որ վնասների պահանջումը մի քայլ չէ դէպի յետ. դա կարևոր է ապագայ ջարդերի կրկնութիւնը խափանելու համար:

Ս. Յարութիւնեան: Այստեղ ասում են, Թէ անհնարին է վնասներ պահանջելը: Ուրեմն այլ ևս ինչի համար են մասնաժողովները՝ վնասները որոշելու համար, եթէ չեն անելու այդ վնասները: Վարչութիւնը այժմ շատ անգամ պահանջում է վնասները: Դա համապատասխան է ժողովրդի աշխարհահայեցողքին և սովորոյթային իրաւունքին, որ Թոյլ է տալիս համայնական երաշխաւորութիւնը: Ուրեմն մեր առաջարկած միջոցը փոփոխութիւն չի մտցնի ժողովրդի հայեացքի մէջ: Վնասների պահանջումը կարևոր է յանուն արդարադատութեան, այլապէս նոր ջարդեր կը լինեն: Ամբոխը կարող է մտածել. քանի որ պատիժ չը կայ, ինչու նորից չօգտվել:

Կարաբէկով, խօսում է նախ այն մասին, որ Պետերսոն գժտութեան խնձոր գլորեց մուսուլմանների և հայերի մէջ: Ապա անցնելով վնասներին, նա գտնում է, որ եթէ ժողովը կամենում է վնասներ պահանջել, ամենից առաջ ուրեմն պէտք է գլխաւոր պատճառները որոշել, այլապէս անկարելի կը լինի իմանալ ով է իսկական յանցաւորը, իսկ մենք որոշել ենք չը խօսել պատճառների մասին:

Ա. Գուլքասեան տարօրինակ է գտնում, որ անցեալի վերաբերմամբ անհնարին են գտնում վնասներ պահանջելու եղանակը, իսկ այդ եղանակը հնարաւոր են գտնում ապագայի վերաբերմամբ: Այդ ինչ տեսակ երկդիմի Յանուս է, որ իր դէմքը կամ այս կողմն է ուղղելու, կամ միւս կողմը: Եթէ այդ եղանակը արդար է ապագայի համար, արդար պէտք է լինի և անցեալի համար:

Աղաեւ: Այստեղ կոնֆերենցիա չէ երկու կռուող ազգերի, որոնք որոշում են փոխադարձ վնասները: Անցեալ տարուայ դէպքերի մէջ չը կար մի կամք, որ ուղղում էր մի ազգ միւսի դէմ, այլ կար մասսաների տարերական բաղխումը ընդհարմամբ: Դուք, պարոնայք հայ պատգամաւորներ, ասում էք. որ բոլոր այս ցաւալի Թշնամութիւնը ծագեց իշխանութեան ստորին գործակալների կամքով, որոնք կամենում էին իբր Թէ կանգնեցնել ազատագրական շարժումը և որոնց ձեռքում մուսուլման ազգը ամբողջ գործիքի դեր է խաղում (Թէև մենք բոլորովին համաձայն չենք, այդ կարծիքի հետ և երբէք չենք եղել գործիք իշխանութեան ձեռքում): Ի՞նչ իրաւունք ունէք ուրեմն այժմ պահանջել վնասներ այդ գործիքից, Թողնելով մի կողմն այն, Թէ ով, ձեր կարծիքով, ուղղում է այդ գործիքը: Ապացուցէք, որ մուսուլման ժողովրդի առանձնաշնորհեալ դասակարգերը ղեկավարում էին մասսան և միայն այդ ժամանակ դուք իրաւունք կունենաք պահանջել նրանցից վնասները, այսինքն կործանել նրանց: Ես արտօնեալ դասակարգերի երկրպագուն չեմ, բայց կարծում եմ, որ առանց իր բէկերի և աղալարների, մուսուլման ժողովուրդը կը կորչէ, որովհետև նրանք հանդիսանում են նրա ինտելիգենցիան, հոգևոր, մտաւոր, բարոյական ղեկավարները: Ահա այդ գիտակից տարրը դուք կամենում էք կորցնել: Բայց մուսուլմանութիւնը Թոյլ չի տայ: Մենք ապացուցինք, որ միշտ պատրաստ ենք հնազանդվել արդար օրէնքին, բայց երբ վնասները կորոշեն գաւառապետները, որոնց Թերութիւնների մասին դուք խօսում էիք երէկ, այդպիսի անարդար օրէնքին մենք չենք հնազանդվի: Երկրի տնտեսական բախտը ոստիկանութեան յանձնելը ծայրահեղ անարդարութիւն կը լինի:

Ձայներ, Բաւական է, բաւական է, յետաձգել նիստը:

Մալամա, յայտնում է, որ ժողովականների խնդրանօք նիստը փակվում է, յաջորդ նիստը նշանակելով հինգշաբթի մարտի 2-ին: Այժմ առաջարկվում է ընտրել մասնաժողով քոչի հարցի համար:

Ընտրվում են պ. պ. Բալանթար, Մեհրաբեան, Տէր-Աւետիքեան, Մելիք Բէգլարեան. Տէր-Պետրոսեան, Լ. Ղուլեան, Մ. Լազարեան (հայերի կողմից) և պ. պ. Թոփչիբաշեվ, Վէքիլով, Էմինով, Սուլթանով, Խասմամէդով, Շախմալիեվ և Միրզայեվ (Թուրքերի կողմից)

ԱԿՆԱՏԵՍԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

—

Փետրվարի 22-ին Շուշուց դուրս ենք գալիս բաւականին Թւով հայեր դէպի Եւլախ [illegible] գնալու: Բարդա կայարանում, ձիերի պակասութեան պատճառով, մեզ շատ ուշացրին: Վերջապէս երեկոյեան ժամի 6-ին, դիլիջաններ են լծում, իսկ ժամի 8-ին լծում են իմ կառքը: Երկու հոգի բոլորովին անհոգ նստած գալիս ենք և երբ մօտենում ենք Սայիֆոր կոչված ստրաժնիկների պահակին, մի կոզակ մօտենում է ինձ և ասում.

—Պարոն, այստեղ ձիաւոր Թուրքեր են երևացել, գնալը երկիւղալի է, դուք էլ խորհուրդ տուէք այս դիլիջանի մարդկանց կամ մնալ այստեղ, կամ յետ դառնալ դարձեալ Բարդա:

Ես համաձայնվում եմ կոզակի հետ, բայց Շուշու ոստիկանապետի կինը հակառակվում է և մենք վճռում ենք շարունակել ճանապարհը: Հետներս վերցրինք մի կոզակ և երեք ստրաժնիկ: Որքան էլ համոզեցի, չորս մարդը քիչ է, Թուրք ձիաւորները կարող են շատ լինել, բայց իմ խօսքերը մնացին «ձայն բարբառոյ յանապատի», ուստի ամենամեծ երկիւղով մենք շարունակեցինք ճանապարհը, համոզված լինելով, որ մեզ եթէ չը սպանեն, գոնէ անպատճառ պիտի կողոպտեն:

Մօտ վեց վերստ մնացած մինչև Եւլախ կայարանը, ես նկատեցի (ես վերջին կառքումն էի), որ մեր ետևից ինչ որ ստուերներ են շարժվում (լուսնեակ գիշեր էր): Ես իսկոյն կանչեցի կառապանի մօտ նստած կոզակին, որ Թուրքերը գալիս են: Ինչեր չանցան այդ րոպէին իմ մտքով, Տէր Աստուած..: Կոզակը կանչեց դիլիջանների առջևից գնացող ընկերներին, որոնք իսկոյն յետ դարձան և հրացանները ուղղեցին դէպի անծանօթ աւազակները: Սրանք վեց հոգի էին և նոյնպէս հրացաններ ունէին պատրաստ բռնած դէպի մեր կողմը, բայց այդ վախկոտ աւազակները երևի տեսնելով ստրաժնիկների բռնած անվախ դիրքը, առանց հրացան արձակելու, հեռացան: Մենք մինչև Եւլախ դողդողալով եկանք:

Մի ժամ չանցած, յանկարծ կայարանի դահլիճն են Թափվում տասն և չորս Թալանված մարդ, որոնցից մէկը մի գիւղացի կին էր, իր երկու փոքրահասակ մանուկներով: Սրանք պատմեցին հետևեալը. «Երբ մենք Բարդից դուրս եկանք, մեզ պատահեց մի զինված Թուրք, որը ասաց Թէ պէտք է ձեզ կոտորեմ: Մենք ուշադրութիւն չը դարձրինք, բայց մի և նոյն ժամանակ կառապանին ստիպեցինք, որ մեզ շուտ հասցնէ առջևից գնացող դիլիջաններին. Նա պատասխանում էր մեզ՝ «իշալլահ, ոչինչ չի լինի» և շարունակում էր քշել առաջվայ պէս շատ դանդաղ: Երբ Սայիֆոր պահակից մի քանի վերստ հեռացանք, յանկարծ մեզ շրջապատեցին վեց ձիաւոր և երեք հետևակ Թուրքեր, որոնցից մի երկուսին մենք տեսել էինք Բարդում: Նրանք մեզ ճանապարհից հեռացնում են, ցած են բերում բոլորիս, մերկացնում են սրբերը և պահանջում մեզանից ինչ որ ունենք: Մենք [illegible] երկիւղից պապանձված, խեղճ կնոջ և մանուկների լաց ու կոծից զգայազուրկ՝ ինչ ունէինք առանց մի բառ արտասանելու տուինք, բայց նրանք դրանով չը բաւականացան, այլ խուզարկեցին առաջ մեզ և յետոյ դիլիջանը և որքան արժէքաւոր իրեր կային, բոլորը տարան ու յետոյ մեզ ցանկացան բարի ճանապարհ, իսկ կառապանին ասացին «հէնց սրանք են քո բերած մարդիկը»: Մեզանից տարան մօտ վեց հարիւր րուբլի փող և նոյնքան էլ ապրանք:

Պատմելուց յետոյ իսկոյն երեք հեռագիր ուղարկեցին Փոխարքային, գեներալ-նահանգապետին և գեներալ Գոլոշչապովին ու գնացին տեղական պրիստաւի մօտ, որ մի Թուրք է, ափսոս մոռացայ ազգանունը հարցնել, արձանագրութիւն կազմելու, որը եթէ մեր ասած ժամանակը միջոցներ ձեռք առնէր, կարող էր աւազակների հետքը գտնել: Նա բաւականացաւ արձանագրութիւն կազմելով և խոստանալով միւս օրը աւազակներին բռնելու: Որպիսի հեգնութիւն: Թալանվածներին հարց ու փորձ անելիս նա շատ տարօրինակ մտքեր էր յայտնում, օրինակ, Արսէն Շահրուրեանցին հարցնում է:

Քանի րուբլի փող են տարել:

—Քսան և հինգ րուբլի և չեմ իմանում քանի կոպէկ:

Որտեղ ես գնում:

—Գնում եմ Կրասնովոդսկ:

Մի Թէ մինչև Կրասնովոդսկ այդքան փող կը վերցնեն, ինչպէս տեսնում եմ, սուտ ես խօսում:

Եզրակացութիւնը Թող ընթերցողը անէ:

Եթէ պ. պրիստաւը ցանկանայ, կարող է գտնել աւազակներին, որովհետև իր մօտ նստած ռուս սպային նա ասում էր. «երևի այն մի քանի մարդիկն են»: Շատ հետաքրքիր է «այդ մի քանի մարդիկը» ինչու մինչև օրս արդարութեան ձեռքը չեն տրված, ինչու նրանց ազատ Թողնել, որ նրանք գաղանաբար նոր-նոր յանցանքներ գործեն. ինչպէս երևում է, պ. պրիստաւը շատ լաւ գիտէ, Թէ ովքեր են այդ աւազակները, ցաւալին այն է, որ ռուս սպան էլ գիտէ, բայց լռում է:

Կողոպտվածները յայտնում են պրիստաւին, որ նրանք կարծում են, որ կառապանը ճանաչում է աւազակներին և առաջուց իմացել է որ դիլիջանը պիտի ենթարկվի աւազակների յարձակման: Սրան աւազակները մի կողմն են քաշել և հետը խօսել, բայց չենք լսել Թէ ինչ են ասել: Խուզարկում են Թուրք կառապանին և ինչ. նրա մօտ գտնում են Արսէն Շահրուրեանցի պիջակը և Արշակ Թամրազեանցի շալվարը ու կրկնակօշիկները, իսկ նա առաջուց ասում էր, Թէ ինձ էլ կողոպտեցին և տասը րուբլի տարան: Այժմ հարց է, ինչու պրիստաւը այսքան բան գտնելուց յետոյ, կառապանին արձակ բաց է Թողնում. չէ՞ որ նրա ազատ լինելը գործին մեծ վնաս կարող է բերել: Հանելուկ չէ՞ սա արդեօք:

Ա՜խ, երբ մենք կունենանք ազնիւ ու պարտաճանաչ ծառայողներ, արդեօք կը տեսնենք, գոնէ, Թէ հին ռէժիմի բռունցքի տակ պիտի հալ ու մաշ լինենք:

«Լեռնեցի»

Բագու.

ՄԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ա. Բալանթար տեղական ռուս լրագիրներին ուղարկել է հետևեալ նամակը՝

«Աչքի անցկացնելով լրագիրները և հետաքրքրվելով, Թէ ինչպէս է ձևակերպված քոչի մասին իմ այն զեկուցումը, որ ես արել էի հայ-Թուրքական խորհրդակցութեան նիստում, ես նկատեցի, որ նրանցից մի քանիսը լրիվ, իսկ միւսները ոչ լրիվ ճշտութեամբ արտայայտել են նրա էութիւնը:

Ցանկալով վերացնել հակասական մեկնութիւնները, անհրաժեշտ եմ համարում հաղորդել իմ ասածների էութիւնը:

Իմ զեկուցման մէջ ես բնորոշեցի մեր երկրի քոչի գործը և պարզելով նրա նպաստաւոր և աննպաստ կողմերը, ցոյց տուի, որ նա պէտք է դառնայ հասարակութեան և պետութեան համար հերթական մի հարց, որպէս զի միջոցներ ձեռք առնված լինեն աջակցելու մի կողմից խելացի լեռնային տնտեսութեան հաստատելուն, իսկ միւս կողմից քոչող ժողովրդին նստակեաց դարձնելու: Ընդգծելով բարեփոխութեան անհրաժեշտութիւնը, ես շեշտեցի, որ այդպիսի բարեփոխութիւնը իր իրագործութեան համար պահանջում է ժամանակ և մի շարք կուլտուրական ձեռնարկութիւններ, և ուրեմն քոչերը ներկայումս վերացնել անկարելի է:

Դա է իրերի լօգիկան, որը պէտք է աչքի առաջ ունենալ:

Իմ զեկուցման երկրորդ մասում ես խօսեցի այն վիճակի մասին, որի մէջ ընկաւ մեր երկիրը հայ-Թուրքական ընդհարումների պատճառով: Երկրի զանազան կողմերից ստացված տեղեկութիւնների և Թիֆլիս եկած հայ պատգամաւորների արած յայտարարութիւնների հիման վրայ, պարզվեց, մեզ համար, որ հայ ժողովուրդը, վախենալով Թուրքերի հետ ընդհարումներից, խնդրում է հեռացնել այս տարի ամեն մի շփում Թշնամական տարրերի միջև և վերացնել քոչը այն բոլոր տեղերում, ուր եղել են ընդհարումներ:

Դա էլ իրերի լօգիկան էր, որ առաջ էր եկել հայ-Թուրքական սոսկալի ընդհարումներից:

Եւ ահա հայ պատգամաւորները պէտք է հաշիւ ունենային այս երկու գրութիւնների հետ, որոնցից մէկը ասում էր Թէ՝ քոչերը չեն կարող կանգնեցվել բնական և կուլտուրական հանգամանքների պատճառով, իսկ միւսը ասում էր Թէ ցանկալի է մի տարով զադարեցնել քոչը հայ-Թուրքական շարժման ծանր պայմանների պատճառով:

Ի՞նչ պէտք էր անել:

Հայ պատգամաւորները իրանց մասնաւոր խորհրդակցութիւններում մանրամասն ուսումնասիրեցին գործը և չը ցանկանալով իրանց հարևան համերկրացի Թուրքերին խանգարել շարունակելու իրանց տնտեսութիւնը, մշակեցին մի քանի միջոցներ բարեկարգելու քոչի գործը, քննութեան ենթարկելու Թուրք տեղեկատուների ծրագրում նշանակված միջոցները:

Միջոցների քննութիւնը և կրիտիկան ցոյց տուին, որ նրանք կամ բաւականաչափ իրական չեն, կամ շատ ծանր են, և յամենայն դէպս մտքերի ներկայ լարված տրամադրութեան ժամանակ նրանք չեն վերցնում վտանգաւոր հրդեհի բռնկման վտանգը:

Ի՞նչ էր մնում անել հայ պատգամաւորներին. ցոյց տալ դրութեան լրջութիւնը, ներշնչել այն համոզմունքը, որ խնդրի լուծումը պահանջում է էական միջոցներ ընդհարումների առաջն առնելու համար և յամենայն դէպս յայտնել, որ հայ պատգամաւորները չեն վերցնում առաջիկայի վերաբերմամբ պատասխանատուութիւնը:

Ահա այդ էլ արի իմ զեկուցման մէջ: Նոյնն արեցին և հայ պատգամաւորները իրանց ճառերում:

Ոչ ոք այնպէս շեշտակի և ուժեղ կերպով չապացուցեց քոչի անխուսափելիութիւնը, ինչպէս հայ պատգամաւորները, բայց և ոչ ոք այնպէս չընդգծեց այնպէս խիստ կերպով, հնարաւոր վտանգները, ինչպէս նոյն պատգամաւորները. իսկ մահմեդական պատգամաւորները համառօտ պնդում էին միայն քոչի անխուսափելիութեան վրայ, այսինքն այն բանի վրայ, որ ոչ ոք չէր բացասում:

Իսկ այն գարանտիաների հարցը, որոնցով պէտք է ապահովվէին, ներկայ կրիտիկական տարում, ընդհարումներին ենթարկված տեղերի հանգստութիւնը և խաղաղութիւնը, չենթարկվեց այն լուրջ մշակութեան, որ կարևոր էր, որպէս զի կարելի լինէր համոզել հայ, այլ և Թուրք ազգաբնակութիւնը Թէ իրապէս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

IV

Ճանաչենք, լաւ ուսումնասիրենք մեր միջավայրը: Դա և դրացիութեան տարրական պարտք է և պահանջ առօրեայ գործունէութեան: Դա կեանքի ու բարօրութեան պահանջ է այն բոլոր ժողովուրդների համար, որոնք շփվում են մուսուլմանների հետ, բայց դա մի «կատէգորիկ հրամայական» է մասնաւորապէս հայ ժողովրդի համար: Լոկ մանկամիտ բացականչութիւններով, Թուրք պրօլետարիատին կոչեր ուղղելով, նրա ուժի և իդէալիզմի վրայ յոյսեր տածելով՝ լուծում չենք տայ արիւնոտ խնդրին:

Ո՞ւր է այն քաղաքական ալխիմիան, որի շնորհիւ կարելի լինէր արճիճի բնազդները միանգամից վերածել ոսկէ բարքերի..,

Ո՞ւր էր, Թէ հրապարակի վրայ լինէին միայն զուտ տնտեսական, դասակարգային կատէգորիաները, առանց ռասային-հոգեբանական բազմակնճիռ պրոբլեմների:

Ո՞ւր էր, Թէ իսկապէս «երկու բուրժուա դասակարգերի մրցումը» լինէր ներկայ արհաւրալի ճգնաժամի սնուցող աղբիւրը... Բայց մենք տեսանք, որ դա մի աղաղակող անմտութիւն է միայն, մի խակ ու սխոլաստիկ յայտարարութիւն, ծնունդ ամէն բան խեղաթիւրող մետաֆիզիկական ռէզոնեորութեան: Եթէ ցեղական փակտորը այսօր մի խոշոր մեծութիւն է քաղաքակրթված Արևմուտքում, մի ուժ, որ սօցիալիստ կուսակցութիւններն անգամ ստիպված են հաշուի առնել իրանց պրօպագանդի, ծրագրի ու տակտիկի մէջ,—ապա այդ փակտորի ազդեցութիւնը ուղղակի ահեղական է մեր միջավայրում...

Օպտիմիզմը հասարակական կեանքում լաւ բան է, ի հարկէ, բայց յոռետեսութիւնը որոշ պարագաներում աւելի լաւ է: Պէտք է իմանալ խոր Թափանցել մարդկային բնութեան մանաւանդ յոռի եւ չարանիւթ մղումների մէջ,—ասել է մի ֆրանսիացի հրապարակախօս, և լաւ է ասել: Պէտք է սրատես հայեացքով զինվել, նշմարելու համար մեր նմանների, հարևանների մէջ մանաւանդ ստորը, անազնիւը: Այդպէս է պահանջում ամենատարրական քաղաքագիտութիւնը:

Վարդագոյն հայեացքները, ջինջ հաւատն ու վստահութիւնը դէպի դրացու, Թէկուզ և լծակցի, զգացումները ինքն ըստ ինքեան համակրելի ու գրաւիչ են, բայց մենք կուզէինք և հազար անգամ երանի կը տայինք, որ սրանից մի տարի առաջ, մեծ կատաստրոֆի նախօրեակին, հայ ժողովուրդը նուազ հաւատ տածէր դէպի Թուրք դրացու բարեացակամութիւնը և աւելի հակամէտ լինէր տեսնելու նրա մէջ չար, վտանգաւոր տրամադրութիւններ: Անակնկալը այնքան զարհուրելի և այնքան կործանարար չէր լինի մեզ համար: Մենք հազար անգամ երանի կը տայինք, որ այդ նոյն սկեպտիցիզմը, նոյն Թերահաւատութիւնը դէպի դրացի Թուրքը արտայայտվէր գոնէ աղէտի բռնկումից յետոյ—ուշ, քան երբէք—Շուշու, Գանձակի և ուրիշ բազմաթիւ դէպքերից առաջ, ուր հայ ազգաբնակութիւնը այնքան չարաչար ու անմիտ կերպով զոհ գնաց իր յանցաւոր, աններելի, գրեթէ չնաշխարհիկ դիւրահաւատութեան... Մի տեղ արիւնարբու Տակայշվիլիին են ներբողներ կարդում բազմատարագիր յիշատակագիրների մէջ, մի այլ տեղ, Գանձակում, չը նայած ողբերգական պրեցեդենտներին, երկար ժամանակ մեր որոճող հասարակութիւնը չէ կարողանում վճռել՝ ժամ առաջ քաշվելու մարմնով ու գոյքով Թուրքական Թաղից և հաւատում է մօլլաներին, որոնք առերես սէր են քարոզում, օրօրում, քնացնում, իսկ տակից պատրաստում են ճշտակի հարուածը... Աղէտաւոր փաստեր, որոնք չափազանց ծանոթ են, տաճկա-հայկական շարժման ընթացքում... Եթէ ռուս, վրացի ու այլ ազգերի սօցիալ-դէմօկրատները—քչերը, անշուշտ—դեռ պատրանքներ ունեն Թուրք տարրի նկատմամբ և պատրաստ են նոյն չափով չափել նրան, հային ու միւս ժողովուրդներին,—ապա անհրաժեշտ է, գէթ ի շահ ճշմարտութեան, ուսումնասիրել մեր հարևանին, դուրս բերել նրան աշխարհի առաջ իր իսկական կերպանքով, պատկերացնել նրան ոչ միայն իր այժմեան էպօպէի մէջ՝ պատերազմի դաշտում, յարդեայ խուրձը ձեռքում խաղացնելիս և գիւղեր ու քաղաքներ հրդեհելիս, վագրի հանդիւնով դիակները յօշոտելիս, կանանց ու երեխաներին մորթոտելիս և փորոտիքը շներին նետելիս,—այլ պատկերացնել նրան և սովորական, նորմալ ժամանակ, իր սօցիալական ինքնատիպ գծերով, իր ամենօրեայ «իդիլլիայի» մէջ...

Սօցիօլօգիայի ուշագրաւ մի նիւթ... Նախապատմութեան մի հարուստ բեկոր, որի էական «բարեմասնութիւնները» կը բաւէ յիշատակել ներկայ էջերում:

—

Ցեղա-կրօնական խտրութեան բարեկամ չենք և ոչ էլ ցեղերի բնածին անհաւասարութեան Թէօրիայի դաւանող: Ժողովուրդների իրաւական հաւասարութեան մասին խօսելու հարկ անգամ չը կայ,—նա մի անառարկելի դօգմա է մեծ յեղափոխութեան օրերից ի վեր, ինչպէս որ մարդկային անձնաւորութիւնն էլ անբռնաբարելի մի սրբութիւն է բոլոր ժամանակներում և բոլոր աշխարհագրական կէտերի վրայ: Իրաւունքի ժամանակակից փիլիսոփայութեան համեմատ՝ բոլոր մարդկային համախմբումները կոչված են հաւասարապէս վայելելու բնութեան ու քաղաքակրթութեան բարիքները...

Այդ այդպէս լինելով հանդերձ, իրողութիւն է և այն որ ժողովրդաբան-գիտնական էտնոլօգի առաջ մարդկութիւնը ներկայանում է իր անվերջ այլազանութեամբ, ցեղագրական տարբեր միութիւններով, որոնց յաճախ անդունդ է բաժանում,—այնքան նրանք տարբեր են իրանց բնորոշ, առանձնայատուկ ֆիզիօնոմիաներով... Յամենայն դէպս, եթէ ընդունենք, որ երկրագնդի վրայ իրօք չը կան, էութեամբ տարբեր բարձր ու ստոր ցեղեր—մինը ընդունակ, շարժուն ու մշտապէս առաջադիմող, միւսը անընդունակ ու յաւէտ անշարժ—այլ որ ամեն մի մարդկային համախմբում ընդունակ է որոշ, նպաստաւոր պայմաններում, վաղ Թէ ուշ զարգանալ ու առաջադիմել, ապա պէտք է խոստովանենք, որ զարգանալու ու առաջադիմելու այդ ընդունակութիւնը խիստ տարբեր աստիճաններ է ընդունում տարբեր ցեղերի մէջ:

Կան, իրաւ է, բազմաթիւ ցեղեր, մանր ու խոշոր, որոնք ոչ մի հնարաւորութիւն չունեն ցոյց տալու իրանց այդ ընդունակութեան չափը: Ընկած հեռու քաղաքակրթութեան հօրիզօններից, աշխարհագրական անբարեյաջող դիրքերի մէջ, Աֆրիկայի, Ամերիկայի և Աւստրալիայի անյայտ խորշերում՝ նրանք—Բուշմէններ ու Կաֆրներ, Պապուասներ, Հօտտենտօտներ, Էսկիմօսներ, ամեն տեսակ կարմրամորթներ ու սևամորթներ—առիթ ու դիւրութիւն չունեն, այսպէս ասած, դրսևորելու իրանց ներքին մտաւոր ու հոգեկան կարողութիւնները և յարմարվելու սօցիալական ընդհանուր էվօլիւցիայի օրէնքներին: Նրանց որակում են «բնաժողովուրդ» կամ բնութեան ժողովուրդ (Naturvolk) վիրաւորական բառով, մի բառ, որ կարծես Թարգմանն է այն բոլոր սարսափների, որոնք կատարվում են՝ զուտ բիօլօգիական կեանքով ապրող այդ նախնական, գաճաճ համայնքների աշխարհում: Քաղաքակրթութիւնը հետզհետէ մարսում է նրանց խաղաղ նուաճման, կամ բռնի ճանապարհով... Այդ վայրենի համայնակեցութեան իր յաւիտենական անշարժութեամբ, իր քարացած նախապաշարումներով ու ֆէտիշներով ոչինչ անօրմալ բան չունի իր մէջ քանի որ հարիւրաւոր ու հազարաւոր սերունդներից ի վեր այդ բնացեղերը ապրել են հեռու կուլտուրայի շփումներից, բարձր, մշակված հասարակութիւններից, հեռու հաղորդակցութեան գծերից, մեծ գետերից ու ծովերից, մշտապէս փակված իրանց զուտ բնական, կօսմիքական միջավայրում, ենթակայ բիրտ ու տարրային ազդակներին... Ոչինչ զարմանալի, ոչինչ տարապայման բան չը կայ այդտեղ:

Բայց ահա մեր առջև մարդկային ընդարձակ ագրեգատներ, համախմբումներ, որոնք նոյն իսկ բաղդաւորագոյն սահմաններում ապրելով, աշխարհագրական և ցեղագրական բարեյաջող պայմանների մէջ, մնում են երկար դարերի ընթացքում զուրկ ամեն տեսակ կուլտուրայի ու առաջադիմութեան... Ինչո՞ւ է այդպէս... Պատասխան չը կայ: Այդ էլ, անշուշտ, բնութեան առեղծուածային խաղերից մէկն է, որ մարդաբանական ու հասարակական գիտութիւնը դեռ չէ Թափանցել, չէ լուսաւորել: Բացասական, հակասօցիալական ուժերը—անյիշատակ ու անխուր անցեալի մի ժառանգութիւն—տիրականօրէն բանեցնում են իրանց ազդեցութիւնը և կաշկանդում, ընդ երկար խափանում մարդկային այդ հոծ համախմբումների առաջադիմութեան ընթացքը:

Այդպէս են այն ցեղագրական միութիւնները—Թաթար, քիւրդ, տաճի՛կ և այլն—որոնցով հայութիւնը շրջապատված է այսօր իր պատմական հայրենիքում:

Չը գիտենք, կա՞յ արդեօք էվօլիւցիայի տիեզերական պրօցէսի մէջ աւելի մռայլ ու վհատեցուցիչ մի դրւագ, աւելի յոռետեսութիւն ներշնչող մի կէտ, քան այդ ահագին մարդկային զանգւածների յամառ ձգտումը՝ մնալ աւանդական անշարժութեան մէջ, փարել անցեալի, միշտ անցեալի խաւար ու բարբարոս էմբլէմներին: Ծանր ու չարաղանջ մի հարց՝ որ այսօր ընդունում է մեր, հայերիս համար առանձնապէս սուր ու տխրագին այժմէութիւն..: Էվօլիւցիօնիստները, ճիշտ է, խօսում են զարգացման ժամանակաւոր կասեցումի մասին (Hemmung der Entwicklung), Թէ բիօլօգիական և Թէ հասարակական օրգանիզմի մէջ, բայց որ այդ կաշկանդումը այնքան դարեր տևէ և այն էլ այնպիսի զանգւածներում, որոնք շփման մէջ են աւելի բարձր, կուլտուրական համայնքների հետ—ահա Թէ ինչն է սարսափելի և ապշեցուցիչ: Ի՞նչ տարբերութիւն կայ արդեօք այժմեան դրութեան և այն հօրդային-քոչւորական ժամանակների մէջ՝ երբ Չինգիզխաններն ու Բատուները քշում էին Ասիայի խորքերից իրանց նախրային լէգէօնները՝ դէպի աշխարհակործան նուաճումներ...

Իրանց համայնակեցութեան ու հոգեբանութեան շատ գծերով՝ հային շրջապատող մահմեդական ցեղերը վերարտադրում են մեր աչքերի առաջ սօցիօլօգիական առաջին շրջանը՝ վայրենութեան կամ բնութեան էպօխան՝ երբ, ինչպէս ասում են, մեռելներն էին հրամայում կենդանիներին, երբ տրադիցիօնալիզմը, աւանդապաշտութիւնը, իշխում էր [illegible], երբ պայմանական սովորութիւնների ու հաւատալիքների վիթխարի, քարացած ամբողջութիւնը կաշկանդում էր մտքի ամեն արտայայտութիւն, դատապարտելով հասարակութիւնները զուտ երամական մի գոյութեան: Յայտնի չէ, Թէ երբ կը հասնի մեր դրացիների համար հասարակագիտական երկրորդ էպօխան, բանութեան [illegible], կամ, ինչպէս ասում են, «ազատ վիճաբանութեան» շրջանը, ուր—ինչպէս բոլոր ժամանակակից քաղաքակիրթ ու կիսակիրթ ժողովուրդների մէջ—քննադատական, կրիտիկական միտքը՝ խորտակ ու անընկճելի՝ ապստամբում է բռնաւոր աւանդի դէմ:

Ներկան նրանց մէջ ստորադրվում է անցեալին, ամբողջ շնչաւոր, հոծ [illegible] զանգւածը կրօնական խոր երկիւղածութեամբ ծունր է իջնում մեռած ֆէտիշների առաջ և կեանքի, ինքնագործունէութեան տեղ՝ մենք տեսնում ենք մի հոյլ անշարժութիւն, շղթայված մի անսովոր համերաշխութեան հետ՝ ցեղի, համայնքի անհատների միջև: Մի զարմանալի համերաշխութիւն... Ի՞նչ ասել կուզէ, որ դա այն գիտակից, օրգանական համերաշխութիւնը չէ, որ խարիսխն է բարձր մարդկային հասարակութիւնների, դա զուտ մեխանիկական մի ներդաշնակութիւն է, որ մենք տեսնում ենք իբրև օրէնք, նախնական վայրենի և ռազմասէր համայնքների մէջ: Հային շրջապատող մուսուլման ցեղերը, յիրաւի աննման համերաշխութիւն են ցոյց տալիս ջարդելու, հրդեհելու և աւերելու, երբեք բայց շինելու, երբեք ստեղծելու գործում... Այդպէս է միշտ արտայայտվել նրանց «ցեղական հանճարը»:

Մեքենայական այդ համերաշխութիւնը իր որոշ դրական դերն է ունեցել բոլոր հօրդային համախմբումների մէջ՝ քաղաքակրթութեան արշալոյսին, երբ գոյութեան դժնդակ կռիւը եղել է տիրապետող իրողութիւնը, երբ պէտք է եղել ամեն վայրկեան պատրաստ գտնվել՝ կռւի ու կարգապահ բանակով արշավելու Թշնամու դէմ. բայց այդ «համերաշխութիւնը» մի անախրօնիզմ է, հասարակագիտական մի անհեթեթութիւն է մեր քաղաքակրթված միջավայրում. նա երբէք չի լինի ազատութեան սկզբունք, այլ միայն ստրկութեան, նա միշտ կը խրախուսէ երամական ոգին, ի վնաս քննականին, նա միշտ կը բարձրացնէ, միշտ հասարակական գործունէութեան գլուխ կը կոչէ ողբալի միջակութիւններ, մտաւոր ու հոգեկան ներքինիներ, որոնցով այնքան փայլում է այսօր մեր դրացի մահմեդական ժողովուրդը:

Մի զարհուրելի առհաւութիւն, ատավիզմ: Հապա կրօնը.. Բոլոր կրօնները ըստ էութեան յետադէմ են,—Իսլամը առաւել բոլոր կրօններից ամենայետադէմն է: Իբրև տիրական, գերիշխող փակտոր վերը յիշած ժողովուրդների կեանքում՝ նա համարեա վճռական դեր ունի այդ ժողովուրդների յետախաղաց կամ «առաջադէմ» էվօլիւցիայի մէջ... Քաղաքակրթութեան առաջադիմութեան անհրաժեշտ կրիտերիումներից մէկն էլ հէնց այն է, որ կրօնական ֆէտիշիզմը աստիճանաբար նուազում է, որ աստուածային ու կղերական բռնաւոր տիրապետութիւնը հետզհետէ կորցնում է իր հմայքը մարդկանց գիտակցութեան մէջ և տեղի է տալիս աշխարհիկ ոգու, բանականութեան հրամայական ձայնին.. Այդ երևոյթն ենք դիտում ամբողջ Արևմուտքում և այն բոլոր ժողովուրդների մէջ, որոնք ուղղակի կամ անուղղակի հաղորդակից են եւրօպական քաղաքակրթութեան... Սակայն ահա հասարակութիւններ, ուր կրօնը իր անխուսափելի սանկցիաներով միջամտում է կեանքի բոլոր արտայայտութիւններին, ուր նա որոշադրում է քաղաքական կազմակերպութիւնների ձևը, աստուածային դրօշմ է հաղորդում ամենազազրելի բռնապետութիւններին, ուր նա միահեծան կանոնաւորում է հասարակական յարաբերութիւնները, ուղղութիւն է տալիս հաւատացեալների և՛ բարոյականին և՛ մտաւորին, ուր նա դեռ մինչև օրս էլ փառաբանում «սրբազան պատերազմի» սկզբունքը և ներշնչում է էլէքտրականացող, ֆանատիկոս մասսաներին—դեռ այսօր էլ, ասեմ—այն չարաշուք համոզմունքը՝ Թէ իրօք ամեն մի պատերազմ «անհաւատների», գիաւուրների դէմ աստուածահաճոյ մի գործ է, որի մէջ մեռնողները դառնում են դրախտաբնակ մարտիրոսներ, մինչդեռ պատերազմից յետ կեցողները, դասալիքները մատնվում են դժոխքի արհաւիրքներին.., Մի կրօն, որ ցեխի պէս քարացել է, որ ոչ մի էվօլիւցիա, ոչ մի բարենորոգում չէ կրել իր ծագման օրերից ի վեր, չը նայած ներքին հերձուածներին ու պայքարներին, որ չէ յարմարվել մարդկային պատմութեան ոչ մի նշանաւոր անցքի, որ երբեք չէ նպաստաւորել դէմօկրատիզմի, ռամկավարութեան ձգտումները, որ միշտ միայն խրախուսել է բռնի աշխարհակալութիւնները հրով ու սրով, Թալանի և սպանութեան քաղաքականութիւնը... Որքան էլ ճչան և հաւատացնեն երիտասարդ Թաթարներն ու տաճիկները իրանց կրօնի իբր-ազատամիտ տենդենցիաներին, նրա լայն համբերողութեան մասին՝ անժխտելի է, որ այդ կրօնը իր ծայրայեղ դօգմատիզմով, անօրինակ, մի անգամ ընդ միշտ բիւրեղացած կրօնա-բարոյական ռեգլամենտացիայով՝ մի սարսափելի պատիժ է ոչ միայն «անհաւատների», այլ և հաւատացեալների համար, մի ուժ, որ անգորոյն բռնութեամբ ճզմում է ամեն ինչ, սառեցնում է վիթխարի զանգւածներ, ստեղծում է մի ջոկ, առանձնայատուկ ուղեղային դրութիւն, ապականացնում է առանց այն էլ խեղճ, մոխրագոյն, բուսական մի կեանք...

Եւ մի՞Թէ մասամբ այդ Թունաւոր ազդեցութեան չենք պարտ՝ որ մեր դրացիները մինչև օրս էլ շարունակում են դեգերել նոյն Թանձրամած, նախապատմական ազիտութեան մէջ, որ սերունդների մի հսկայական շարք է անցել և ըստ երևոյթին դեռ պիտի անցնի, առանց օգտվելու քաղաքակրթութեան լոյսից և բարիքներից, անընդունակ՝ զարգացնելու իրանց մէջ գիտութեան, արւեստի, գրականութեան հեռաւոր նմանութիւններն անգամ: Այդպէս է և տաճիկ ժողովուրդը, այդպէս է ամբողջ Օսմանեան պետութիւնը, որ չը նայած իր նպաստաւոր աշխարհագրական դիրքին և իր մշտնջենական շփման լուսաւոր աշխարհի հետ, հարիւրաւոր տարիների ընթացքում մնում է Եւրօպայի դռների մօտ՝ մի երկրորդ Չինաստան, աւելի ևս յետադէմ,—Չինաստանը անհամեմատ աւելի սիրով է դիմաւորում եւրօպական կուլտուրային:

Որքա՜ն, դժբախտաբար, իրաւացի է հեգելեան Գանսը, երբ նա ասում է Թէ «Իսլամը լոկ յեղաշրջումն է տարածութեան մէջ և ոչ ժամանակի (eine Umwälzung im Raume, nicht in der Zeit), քանի որ նա իր դատարկ աբստրակցիայի, վերացականութեան մէջ չէ պարունակում ոչ և է սաղմ հնարաւորութեան՝ հեռաւոր զարգացման համար»: Ասես ճակատագրի, ֆատումի մի նզովք հալածում է միշտ այդ Թշուառ ժողովուրդներին, հասարակական այդ մեծածաւալ մարմիններին, որոնց անդամները, կարելի է ասել, որ ամեն տեղ են, իսկ գլուխը, մտածող, գիտակից օրգանը—ոչ մի տեղ... Ցեղի ու կրօնի տարակնութիւնները—երկու աշխարհաջինջ պատուհասներ—սերտ դաշնակցած՝ ուխտել են կարծես մինչև վերջ մաքառել քաղաքակրթութեան հզօր ու համաշխարհ ճառագայթների դէմ...

(Կը շարունակվի)

պէտք է լուրջ միջոցներ ձեռք առնուէին ամեն տեսակ ընդհարումների առաջն առնելու համար:

Ու բոլորը թողնվեց յանձնաժողովներին:

Փութէ յանձնաժողովներում հարցը զննելու է և վճռվելու այն լրջութեամբ, որ անհրաժեշտ է այնպիսի պատասխանատու խնդիրների մշակութեան ժամանակ, ինչպիսին է ընդհարումների առաջն առնելու հոգսը ներկայ տարում»:

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

III

Փետրվարի 24-ին

...Եւ այսպէս՝ Բագուի Հայոց Մարդասիրական ընկ. «Աշխատանքի տունը» փակվում է...

«Աշխատանքի տունը» վնաս է անում, ուրեմն պէտք է փակել», — որոշեց Մարդասիրական ընկ. բիւրօկրատիական վարչութիւնը:

«Եթէ վնաս է անում, ուրեմն պէտք է փակել», — հաստատեց վերոյիշեալ որոշումը նոյն ընկերութեան բուրժուա անդամների ընդհանուր ժողովը:

Եւ չը նայած որ ընդհանուր ժողովում կային մարդիկ, (ոչ անդամներ) որոնք «Աշխատանքի տան» վնաս անելը բացատրում էին նրանով, որ անդամները անտարբեր են վերաբերվել գործին, նրան անկանոն ընթացք են տուել, բայց և այնպէս, առանց ի նկատի ունենալու սոյն բոլորը, ընդհանուր ժողովը վճռեց «Աշխատանքի տունը» փակել, այն «Աշխատանքի տունը», որը մի քանի տարվայ ընթացքում Բագուի հասարակութեան ուշադրութիւնն էր գրաւել:

«Եւ ասաց Աստուած՝ եղիցի լոյս և եղև լոյս»...

Վարչութիւնը որոշեց, որ պէտք է փակել և փակվեց:

Շատ հետաքրքիր է իմանալ, թէ «Աշխատանքի տունը» հիմնելով ընկերութիւնը ինչ ունէր ի նկատի. մի արդիւնաբերական հիմնարկութիւն, որը պէտք է ընկերութեան համար նիւթական օգուտ բերէր, թէ մի բարեգործական հիմնարկութիւն, որը բարոյական օգուտ պէտք է տար, գործ՝ աշխատանքի ընդունակ մուրացկաններին...

Տեսնենք ինչ էր ասում իր բերանով ընկերութեան վարչութիւնը.

«Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը ի նկատի առնելով, որ մուրացկանութիւնը Բագւում տարեցտարի, մանաւանդ փետրվարի և օգոստոսի դէպքերից յետոյ զարգանում է, որ այդ դատապարտելի երևոյթը բարոյապէս փչացնում է մուրացկանութեամբ պարապողներին, մանաւանդ կանանց և երեխայոց, նպատակ է դրել ըստ կարելոյն կռուել այդ վնասակար երևոյթի դէմ, նրան հետզհետէ արմատախիլ անելու նպատակով: Դրա համար Վարչութիւնը որոշել է Ընկերութեան «Աշխատանքի տանը», ծերերին, հիւանդներին և այլ աշխատանքի անընդունակներին պատսպարել ընկերութեան որբանոցում հոգալով նրանց կարիքները:»

«Սակայն այդ համակրելի նպատակը իրագործելու համար հարկաւոր է, որ Բագուի հայ հասարակութիւնը ցոյց տայ այդ դէպքում իր աջակցութիւնը, թէ բարոյական և թէ նիւթական օժանդակութեամբ: Առանց հասարակութեան օգնութեան Վարչութիւնը անզօր կը լինի արմատացեալ չարիքի դէմ կռուելու»:

«Ահա այս յոյսով ընկերութեան Վարչութիւնը դիմում է Բագուի ամեն դասակարգի հայ հասարակութեան և ամեն մի անհատի, որ նրանք այսուհետև փողոցներում, տներում, գրասենեակներում և խանութներում ողորմութեան դիմող մուրացկաններին ուղարկեն ընկերութեան գրասենեակը»:

«Բայց որպէսզի Վարչութիւնը կարողանայ բաւարարութիւն տալ բազմաթիւ աղքատներին, անհրաժեշտ է նպաստել ընկերութեանը դրամով, հագուստեղէնով և մանաւանդ պատուէրներով, որպէսզի ընկերութիւնը կարողանայ բոլոր աշխատելու ընդունակ մուրացկաններին գործ տալ «Աշխատանքի տանը»: Եթէ գործ չը լինի «Աշխատանքի Տանը» այն ժամանակ ընկերութիւնը ստիպված կը լինի գործի ընդունակ մուրացկաններին ձրի պահել և այդպիսով նպաստած կը լինի ձրիակերութեան, որ ամենևին ցանկալի չէ»:

«Ուստի Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը խոնարհաբար խնդրում է հայ հասարակութեան և առանձնապէս վաճառականներին և գործարանատէրերին աջակցել այս կարևոր գործին, թէ պատուէրներ տալով և թէ դրամական օժանդակութիւն հասցնելով ընկերութեանս: (Շրջաբերական նամակ Բագւի Հայոց Մարդասիրական ընկ. վարչութեան 16-ից նոյեմբերի 1905 թ.)»...

Վերջապէս ինչ է ասում վերոյիշեալ շրջաբերական նամակը. եթէ ուրեմն Մարդասիրական ընկերութեան Վարչութեան նպատակն է գործի ընդունակ մուրացկաններին գործ տալու և դրանով նպաստած լինելու մուրացկանութեան արմատախիլ անելուն, ուրեմն էլ ինչ խօսք կարող է լինել տարեկան մի քանի հազար (1904 թւին 2442 ր. 44 կ.) րուբլի վնասի մասին, եթէ կայ մի այդպիսի վեհ նպատակ:

Եւ վերջապէս, նկատի ունենալով վերջին ընդհանուր ժողովում արտայայտված մտքերը և իմ սեփական դիտողութիւնները, եթէ «Աշխատանքի Տան» գործը լաւ հիմունքների վրայ դրած լինի և «Աշխատանքի Տան» ղեկը կենդրոնացած լինի այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք հասարակական օգուտը աւելի բարձր դասեն, քան թէ անձնականը, կամ գոնէ բաւականին լինեն, այն ժամանակ «Աշխատանքի Տունը» ոչ թէ միայն վնաս չի անի, այլ նոյն իսկ օգուտ էլ կը տայ:

Որովհետև լրագրական մի փոքրիկ թղթակցութեան մէջ հարկաւորութիւն չը կայ երկար կանգ առնելու այդ հարցի մասին, ես պատրաստում եմ մի երկար տեսութիւն (ընկերութեան 1904 թ. տեղակատուի առիթով) որի մէջ մանրամասն բացատրված կը լինեն վնասների պատճառները և առհասարակ «Աշխատանքի Տան» յանձնաժողովի և ադմինիստրացիայի վերաբերմունքը դէպի այդ հիմնարկութիւնը:

Իսկ առ այժմ թոյլ ենք տալիս մեզ մի փոքրիկ խնդիր առաջարկելու ընկերութեան վարչութեանը լուծելու համար: Թղթէ քասկներ շինելու բաժանմունքը մի պուդ քասկներ շինելու համար ծախսվում է 1 պուդ թուղդ (հասարակ տեսակի) 1 ր. 48 կ.—1 ր. 50 կ. կըրախմալ մօտաւորապէս—5 կ. ծալելու և կըպցնելու համար վճարվում է—10 կ. մանր ծախս-ամենաշատը—10 կ.—15 կ. ընդամենը 1 ր. 80 կ. պուդը:

Իսկ այդ քասկների պուդը ծախվում է 2 րուբլի, ուրեմն մէկ պուդից օգուտ պէտք է լինի ամենաքիչը 20—25 կոպ. (մի կողմ թողած այն, որ կրախմալից քասկների քաշը աւելանում է): Վերոյիշեալ հաշիւը վերաբերվում է ամենահասարակ թղթից շինված քըսակներին, իսկ աւելի լաւ թղթից շինած քըսակները պուդին 50—60 կոպ. օգուտ: Այս հաշիւը այնքան պարզ է, որ ոչ մի կասկածի տեղիք տալ չէ կարող. արդ՝ ինչպէս է որ քըսակների բաժանմունքը վնաս է անում...

Արդեօք վարչութիւնը չէ կարող նեղութիւն կրել մեզ այս հանելուկը բացատրելու:

Վերցնենք մի ուրիշ հաշիւ, հէնց իրան վարչութեան կազմած տեղեկագրի թւերով. 1904 թ. «Աշխատանքի Տան» չուստերի բաժանմունքում պատրաստված է եղել 2400 զոյգ չուստ և այդ չուստերը համարեա թէ բոլորը թէ ծախված են և թէ վարչութիւնը բաժանել է աղքատներին նոյն գներով, ինչ գներով որ առհասարակ ծախսում են նոյն չուստերը ուրիշ արհեստանոցներ և ինչ, 2400 զոյգ չուստին ընկերութիւնը վնաս է արել 1275 րուբլի 7 կոպ., այսինքն մի զոյգ չուստին 53 կ. աւելի վնաս (?), իսկ այդ չուստերի գներն են 35—110 կոպ. և աւելի շատ ծախվում են առհասարակ փոքր համարները: Պէտք է ասել, որ միջին թւով մի զոյգ չուստը ծախվում է առհասարակ 65 կոպ.: Արդեօք ծիծաղելի չէ՞ 65 կոպէկով ծախել և 53 կոպ. վնաս անե՞լ...

Ի՞նչ կասեն սրան գործի ղեկավարները:

Արդեօք երբ և իցէ վարչութեան, կամ «Աշխատանքի Տան» մասնաժողովի անդամները, իրանք իրանց մէջ վերոյիշեալ ձևով հաշւելով, հարց տուե՞լ են թէ ինչ է նշանակում այս հանելուկը: Արդեօք երբ և իցէ ընկերութեան վերստուգիչ յանձնաժողովը (որը միայն անունով գոյութիւն ունի) քննել է «Աշխատանքի Տան» հաշիւները թէ չէ...

Պարոններ, իմացած եղէք, որ հասարակութիւնը երբ և իցէ հաշիւ պիտի պահանջէ ձեզանից ձեր արածների համար...

Վ. Թումանեան

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Փետրվարի 26-ին

Վերջերս ղալաբաշեցիները մի քանի անգամ դիմել էին Փոխարքային, Գանձակի գեներալ նահանգապետին և այլոց, բայց ոչ մի պատասխան չէին ստացել մինչև փետրվարի 20-ը: Փետրվարի 20-ին Ղալաբաշում 30 զինւորի հետ գտնվող օֆիցերը մի գրութիւն է ստանում գեներալ-նահանգապետից, որի բովանդակութիւնից ականատեսներից մէկը պատմեց ինձ հետևեալը:

«...Երրորդ անգամ ղալաբաշեցիք դիմեցին մեզ զօրքի համար, մինչև այժմ նրանց պահանջը թողնված էր անկատար, պատճառը՝ չէինք սպասում, որ յարձակում կարող է տեղի ունենալ Ղալաբաշի վրա, բայց այժմ սպասելի է, որ յարձակում կը լինի Ղալաբաշի վրա: Որովհետև Ղալաբաշի ժողովուրդը խաղաղ ժողովուրդ է և մինչև այսօր չէ մասնակցել որ և է ցոյցերի և բացի դրանից, որովհետև մեր պաշտօնեաները (չինօվնիկները) միշտ էլ գոհ են եղել դրանցից և գոհ են այժմ, ուստի որոշվել է ուղարկել դրանց պաշտպանելու համար զօրք. միայն հարցրէք ժողովրդից. ինչ տեսակ զօրք են ուզում՝ կոզակներ, արտիլերիա, թէ զինւոր (պեխոտա) և ունի՞ն դրանց պահելու համար յարմարութիւններ. յայտնեցէք...»: Երկրորդ օրը օֆիցէրը կանչում է հասարակութեան և յայտնում գրութեան բովանդակութիւնը ու իմանալով ժողովրդից, որ զինւորներ են ուզում (պեխոտա) և ոչ կոզակներ, երրորդ օրը հեռագրում է գեներալ-նահանգապետին և ուղարկում մի գրութիւն ևս իր կողմից, որի բովանդակութիւնը յայտնի չէ մեզ:

Ղալաբաշում գտնվող օֆիցէրը ըստ երևոյթին մի բարեմիտ երիտասարդ է, բայց չը գիտենք ինչու, լսելով որ շուտով յարձակում պիտի լինի և իր զինւորներին դիրքերը ցոյց տալուց և սովորեցնելուց յետոյ՝ թէ ինչպէս պէտք է կռուեն, հէնց այս միջոցում ուզում է մի քանի օրով հեռանալ գիւղից և գնալ կամ Բագու կամ Թիֆլիս: Այս բանը այսօր ինձ հաղորդողն ասում էր. հիմա արդէն թերևս գնացած էլ լինի:

Վերջերս զանազան խոստումներով զբաղված և իրար հետ թշնամացած ղալաբաշեցիները կրկին խելքի են եկել և սկսել են, ինչպէս նուխեցիք կասեն, բուղր-բուղրի ընկնել ինքնապաշտպանութեան միջոցների համար:

Բացի յայտնի Դալի-Ալիից, հաստատ աղբիւրից տեղեկութիւն ունենք, որ Սիբիրից փախած մի քանի յայտնի աւազակներ, որպէս Բինաթ, Շաֆի, Ալի-Մամմադ և Մազրուքի կռւում վիրաւորված և այժմ առողջացած Ղուրդ-Օղլին Արէշի և Նուխի միւս ափին գտնվող թուրք գիւղերից պահանջում են հրոսակախումբ պատրաստելու համար ձիաւոր կռուողներ, իսկ այդպիսիներ չը գտնվող գիւղերից փող, փամփուշտ կամ հրացան: Այդպիսի պահանջ եղած գիւղերից մեզ յայտնի են Հաշամը, Հաջի-Սելլուն, Հին-Գեաչեվուրը, Գեօվշանը, և Վառվառան: Յիշեալ աւազակները, լսում ենք, առաջարկել են նուխեցի դաշնակներ Ջաւադ-օղլուն, Մուխտարին, Իսկանդարին և այլոց միանալ իրանց հետ:

Երկու օր է քաղաքումս է Ղարօղլան գիւղացի Հախվերդի Հաջի-Հասան-օղլին. սա մի իր 90 րուբլի արժեցող ձին բերել է, որ փոխէ մի ուրիշ նժոյգի հետ, ձիու վրա տալով 100 րուբլի ևս, որպէս զի յարձակման ժամանակ լաւ և դիմացկուն ձիու վրա լինի հեծած:

Լուրերին նայելով, Ղալաբաշի վրա յարձակումն անխուսափելի է: Երանի սուտ լինէր կամ չիրագործվէր: Առանց այդ Ղալաբաշում ապաստան գտած խեղճ ու անճար հայերը յուսահատ դրութեան մէջ են: Գարուն է արդէն (եղանակներին նայած) և այդ թըշւառները չը գիտեն որտեղ, ինչպէս և ինչով պէտք է ապրեն, յիշելով իրանց այգիները արտերն ու արտերը սրտի խորքից միայն ախեր է, որ արձակում են: Թիֆլիսում Փոխարքային ներկայացած պատգամաւորներն էլ մի լուր չը բերին...

Գ. Ձ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Փետրվարի 24-ին

Գաւառապետ Ասլանովի կարգադրութեամբ ձերբակալված են Զովգառ գիւղի երեք հայեր, որոնք մեղադրվում են իբրև թուրք Բալչուլլու գիւղի վրա յարձակվողներ: Ըստ երևոյթին գիւղից տարած այն գերիների ցուցմունքով են ձերբակալված հայերը, որոնց մենք վերադարձրել ենք թուրքերին:

Այսօր Թուրքաց Բաղմանլար թաղից մի քանի անգամ հրացաններ կրակեցին հայերի այգիներում բանող հայ մշակների վրա, որոնք միայն անվնաս: Ջորակ կոչվող այգիների մասում ցերեկվայ ժամ 4-ից լսվում են հրացանաձգութեան ձայներ, հայերը հասնելով այդ մասը՝ թուրքերը փախուստ են տալիս:

Գերմանացի Նելենդորֆ աւանի բնակիչները կռուի ամբողջ ընթացքում չեզոք են եղել չէզոքութեան սահմանից, և նրանք, պէտք է ասել, ի կատար են ածել թուրքերի տրամադրութիւնները... բայց չը նայած, որ նրանք չափազանց գոհ են, որ Թոփալ-Հասանլու թըրքաց գիւղը ոչնչացրված և աւերակ է դարձած, որովհետև այդ գիւղի աւազակաբարոյ ժողովուրդը մի մշտնջենական էկզեկուցիա է եղել, ինչպէս աւանի ժողովրդի, նոյնպէս և նրանց այգիների համար, բայց և այնպէս վերջին օրերումս նրանք սկսել են պատսպարել մի քանի կասկածաւոր, մութ ու վատ անցեալ ունեցող աւազակաբարոյ Թոփալ-Հասանլուեցիներ, որոնք խանգարում են գիւղեր գնացող-եկողների հանգստութիւնը:

Թուրքերը նորից հարց են բարձրացրել հայոց թաղին կից աւերակ դարձած Մոլլաջալիլ և Ջայլի թաղերը տեղափոխվելու, չը նայած որ, համաձայն պայմանագրի, վեց ամիս լրացված չէ: Հայերը այդ առաջարկութիւնը ոչ թէ համարում են կանխաժամ, այլ միանգամայն աւելորդ ու անիրագործելի, ինչպէս՝ վաղաժամ Նոր-Շէն թաղի ժողովուրդին Նոր-Շէն դարձնելը: Վերջիններս այսօր միաձայն յայտնեցին իշխանութեանը, որ իրանք միանգամայն անկարող են վերադառնալ Նոր-Շէն, քանի որ խաղաղ ժամանակներում անգամ իրանք մշտական վտանգի տակ են գտնված եղել:

Ա. Դաշտամիրեան

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԻՆԻՑ

Յունվարի 23-ին

Ո՞վ կարող էր երազել, որ այս դաժան, հեռու երկրում, վաղուց հայրենիքից անջատված, ցիրուցան եղած մեր պանդուխտ հայ եղբայրները այսօր անակնկալ կերպով կարող կը լինեն միախմբվել մի արժանաւոր հոգևորականի առաջ, որը դրդվելով հովուական խղճմտանքից, իր բարի ցանկութեամբ արհամարել է ամեն մի խոչընդոտ, որպէս զի հոգեկան մխիթարութիւն բերէ օտարութեան մէջ ստնջվող իր նեղացած հօտին: Որքա՛ն վեհ գաղափարական միտք!

Փառք և պատիւ մեր պաշտելի ծերունի Մեծ Վեհափառին, փառք և այն հոգևորականներին, որոնք կարողանում են մարմնացնել իրանց անձնուրացութեան մէջ ժողովրդի զգայուն ոգին:

Ես Ընձակ վարդապետի գալստեան ուրախալի լուրը յանկարծակի իմացայ տեղական լրագրից: Ամսիս 22-ին շտապեցի «Պորտումուտ» հիւրանոցը, որի ընդարձակ դահլիճը յատկացված էր կրօնական արարողութեան համար: Ժողովվել էին Խարբինի հայկական գաղութի համարեա բոլոր ներկայացուցիչները, մօտաւորապէս երկու հարիւր մարդ: Ամենքն էլ խորին երախտագիտութեամբ էին վերաբերվում ժողովրդասէր վարդապետի բարի գալստեան: Մանաւանդ հրճվել և բախտաւորվել էին նրանք, որոնք, 10—15 տարվայ ընթացքում թափառական չարքաշ կեանք վարելով պաղ Սիբիրի զանազան խուլ անկիւններում, զուրկ էին մնացել բառիս բուն նշանակութեամբ ազգային եկեղեցուց, մայրենի սքանչելի լեզուից:

Աղօթատունը այդ ժամանակ ներկայացնում էր մի գմայլեցուցիչ տեսարան:

Հայր սուրբը ժամերգութիւնից յետոյ դիմեց իր հօտին մի ազդու և խորիմաստ քարոզով մեր ազգի ներկայ ցաւալի իրականութիւնից, ներշնչելով ունկնդիրների կսկծալի սրտերի մէջ հաւատ և յոյս: Հետզհետէ շնորհալի կրօնաւորը մի շարք ապացուցիչ քաղուածքներով սուրբ գրքից, լուսաբանեց իր արծարծած մտքերի խակական նշանակութիւնը: Քարոզը մեծ տպաւորութիւն գործեց բոլորիս վրա—շատերը արտասվեցան: Ի զուր չէ տեղական ռուս լրագրի թղթակիցը համեմատել սրախօս հայ վարդապետին այդ փառաւոր հանդէսում Պիոս պապի հետ:

Քարոզը վերջանալուց, անյապաղ ներկայ գտնվող հասարակութիւնը հրաւիրվեց նախաճաշի: Մեր պանդուխտ հայրենակիցների այդ սրտանց շփումը եղբայրութեան և մտերմութեան բնաւորութիւն էր կրում: Անծանօթ կողմնակի դիտողը, եթէ նա իմանար հայերէն, անշուշտ կը գար այն անխախտ համոզմունքին, որ հայը, որտեղ էլ որ լինի, սերտ կապերով կապված է իր թանկագին հայրենիքի հետ, որ հայի սիրտը, հոգին իր ազգին է պատկանում:

Ընդմիշտ վառ պահիր, հայ մարդ, քո մէջ այդ սուրբ զգացմունքները—դա մեր ազգային յաղթանակն է, դա այն երկնային պահապան ոյժն է, որը դարերից ի վեր մխիթարիչ է հանդիսացել քո դառն կացութեանը, որը յոյս և հաւատ է ներշնչել քեզ և քո նախնիքներին: Այժմ մենք, մտքերի փոխանակութեան շնորհիւ, աւելի մտերմացանք, աւելի իմացանք մեր հայրենիքում ապրող եղբայրների աղետալի դրութիւնը, հայ գիւղացու սև օրը, մեր անցեալը, ներկան, սակայն չը պիտի մենք յուսահատվենք: Այս սուրբ միացումը թող լինի մեր ապագայ գործունէութեան զգաստացուցիչ նշանաբանը:

Մտեր մտածմունքի տակից ժողովուրդը գոհ և ոգևորիչ տպաւորութեան տակ հեռացաւ, շնորհիւ հայազգի երգիչ պ. Կոստանեանին, որը երգեց մի քանի հայկական երգեր: Շնորհալի արտիստը իր թովիչ ձայնով մեծ բաւականութիւն պատճառեց ներկայ հասարակութեան:

Ա. Փիրումեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ուրմիա, փետրվարի 15-ին

Խնդրում եմ, ձեր օգտաշատ «Մշակ» լրագրում տեղ տաք այս մի քանի տողին:

Թաւրիզի Հայուհեաց յայտնի ընկերութիւնը, Ուրմիայում իր պահած 7 դպրոցների կրթական գործը աւելի առաջ տանելու համար, այս տարի հիմնեց «Սահակ-Մեսրոպեան» անուն մի գրադարան՝ յիշված դպրոցների պաշտօնեաներին և աշակերտներին օգտակար ընթերցանութեան գրքեր մատակարարելու համար: Աւելորդ է շեշտել այս կարևոր ձեռնարկութեան տուած աներկբայ արդիւնքը, ուստի խնդրում ենք յարգոյ հեղինակներից, թարգմանիչներից և հրատարակիչներից նուէրներ ուղարկել գլխաւորապէս պարզ և մատչելի գրքերից:

Արդէն կազմված է մօտ 400 կտոր գրքերի հաւաքածու:

Պէտք է ուղարկել այս հասցէով—Ourmia-Perse. ընկերութեան դպրոցների վերատեսուչ՝ Գալուստ Իսքէնդէրեան:

Կը խնդրէինք միւս թերթերին արտատպել այս երկտողը:

Գ. Իսքէնդէրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Ալէքսանդրօ Նեվսկի պալատական տաճարում հոգեհանգիստ կատարվեց Ալէքսանդր II կայսրի մահվան տարեդարձի օրը: Հոգեհանգստին ներկայ էին փոխարքան, օգնականները, գեներալներ, բազմաթիւ զինւորականներ և պաշտօնական անձինք:

Կովկասեան ուսումնարանական շրջանի տեսուչ է նշանակվել, ինչպէս լսում ենք, Վարշաւայի րէալական դպրոցի դիրեկտոր իշխան Կ. Մոս. Արղութինսկի-Երկայնաբազուկ: Կ. Մ. Թիֆլիսեցի է, աւարտելով ուսումը I դասական գիմնազիոնում մտել է Պետերբուրգի համալսարանը, ֆիզիկօ-մաթեմատիքական ֆակուլտէտը: Համալսարանը աւարտելուց յետոյ մի առ ժամանակ վարել է Օդեսայի գեներալ նահանգապետի մօտ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայի պաշտօնը, ապա եղել է Տաշքենդի րէալական դպրոցի դիրեկտոր, այնտեղից տեղափոխվել են նոյն պաշտօնով Ն. Նովգորոդ, իսկ 1903 թւից վարում է Վարշաւայի րէալական դպրոցի դիրեկտորի պաշտօնը: Նա այժմ 52 տարեկան է:

Գեներալ Գոլոշչապովը փետրվարի 28-ին Թիֆլիս ժամանեց անձամբ զեկուցում տալու Փոխարքային իր գործունէութեան մասին:

Թիֆլիս է եկել ֆինանսների մինիստրութեան հարկերի բաժանմունքի քննիչ Մ. Մ. Կիրեեվսկին արքունական պալատների և հարկային տեսուչների գործերը քննելու համար:

Մ. Օ. Արղութեանցի նուիրաբերութեամբ Նաւթլուղում կառուցվող հիւանդանոցի շէնքը արդէն պատրաստ է և նրա բացումը տեղի կունենայ աշնանը: Քաղաքը դեռ պէտք է ծախսէ 20 հազար րուբլի վառարանների, օդանցքների և էլեքտրական լուսաւորութեան համար:

Թիֆլիսի արքունական պալատը ներկայումս շտապ կերպով ցուցակագրում է պետական և հողային հարկեր վճարողների անունները, որոնք իրաւունք ունեն Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու: Այդ բոլոր աշխատանքները կատարելու համար պահանջվում է մօտ երկու շաբաթ:

Թիֆլիսի հետևակ յունկերների ուսումնարանում 1905 թւին սովորում էին 416 ուսանողներ, որոնցից 238 ռուսներ, 29 վրացիներ, 12 հայեր, լեհեր 8 հոգի, օսեթին և լատիշներ 6-ական հոգի, սերբեր 5, բուլղարներ 2, կիրգիզ 1, գերմանացի 2, լեռնցի 1, լիտուացի 1 և մոլդավան 1 հոգի: Ուսումնարանը պահելու համար պետական գանձարանից ծախսված է 133,580 րուբլի, ընթացիկ տարվայ համար մնում է առձեռն գումար 2,050 րուբլի 34 կոպէկ:

Նահանգական վարչութիւնը երկրիս բարձր կառավարութեան հաւանութեամբ զբաղված է քաղաքի համար երեք կարևոր հարցերով. 1) Կուր գետի փոքրիկ ճիւղը հողով լցնելու մասին, 2) Թիֆլիսում Ջրաբուժական կայարան հիմնելու և քաղաքամասերի աղքատախնամ խնամակալութիւն հաստատելու մասին: Ամենայետաձգելի և էական է համարվել առաջին հարցը, որի իրագործման համար մօտիկ ժամանակներս մտադրութիւն կայ հրաւիրել գետի փոքրիկ ճիւղի աջ ափի բոլոր տնատէրերին և վերջնականապէս լուսաբանել այն պայմանները, որոնց հիման վրա նրանք կը համաձայնվեն զիջել գետափնեայ շերտի վրայ իրանց արտօնութիւնները:

Քիմիայի դոկտոր Գ. Բէկնազար-Իւզբաշեանին Բագուի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը թոյլատրել է հրատարակել Բագու քաղաքում ամենօրեայ մի հայերէն թերթ «Բանւոր» անունով: Թերթի ծրագիրը հետևեալն է. 1) Քաղաքական, տնտեսական և սօցիալական հարցեր, 2) Ժամանակագրութիւն, 3) Բէլլետրիստիքա, 4) Գրական քննադատութիւն, 5) Բանւորական կեանքից, 6) Առևտուր և արդիւնաբերութիւն, 7) Զանազան լուրեր 8) Յայտարարութիւններ: (Բ.)

Փետրվարի 19-ին Պետերբուրգի սահմանադրական-ռամկավար կուսակցութեան ժողովի նիստում, ի միջի այլոց, խօսեց և Բագուի նախկին քաղաքագլուխ Ալ. Իվ. Նովիկովը, որին «Русь» թերթը սօցիալ-րէվօլիւցիոնէր է անուանում իր քաղաքական աշխարհայեացքների համար: Ճառախօսը խիստ կերպով քննադատեց սահմանադրական-ռամկավար կուսակցութեան տնտեսական պահանջները: Մի և նոյն ժամանակ նա գոհունակութիւն յայտնեց նրանց ծրագրի քաղաքական մասի լիակատարութեան համար և, իբրև առանձին անհատ, ոչ կուսակցական, հաւանութիւն տուեց նրանց ազնիւ, բացարձակ պայքարին, որը մղում է սահմանադիր և ռամկավար կուսակցութիւնը ժողովրդի ազատութեան և իրաւունքների համար: Իր ճառի վերջում նա խորհուրդ էր տալիս ապրիլի 27-ին գնալ Պետական Դումա և այնտեղ, նրա մէջ պայքար մղել կուսակցութեան իդէալների համար:

Երէկ, առաւօտեան ժամի 7-ին, նահանգական բանտից դուրս, բայց ոչ հրապարակով, ի կատար է ածվել Կովկասեան զինւորական շրջանի դատարանի մահվան դատավճիռը գեներալ Ֆ. Ֆ. Գրեազնովին սպանող Արսէն Ջօրջիաշվիլու վրա:

Քութայիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեներալ-մայոր Ալիխանով-Աւարսկին փետրվարի 27-ին ներկայացաւ Փոխարքային և տուաւ իր զեկուցումը Գուրիայի մասին, իսկ 28-ին նա նորից գնաց Քութայիս:

Մօտ օրերումս լոյս է տեսնելու աշակերտական մի օրգան «Наша Мысль» անունով, որը կուղարկվի դադարեցրած «Эхо»-ի բաժանորդներին: Այն բաժանորդները, որոնք համաձայն չեն լինի այդպիսի փոխանակութեան, կարող են յետ ստանալ բաժանորդագինը Մ. Խաչատուրովի մօտ (Ճամճամէ փողոց, 12, ժամի 4—5):

Գ. Երիցեանը խնդրամատոյց է եղել ուր հարկն է, թոյլտուութիւն ստանալու հրատարակելու Թիֆլիսում ռուսերէն լեզուով երգիծաբանական մի շաբաթաթերթ «Бичъ» անունով: Սուտ է այն լուրը, թէ նա պատասխանատուութեան է ենթարկվել:

Թիֆլիսի Արքունական թատրոնի վարչութեան հետ բանակցութիւն են սկսել Բոգօլիւբով և Շուէյմերբերգ եկող տարեշրջանի համար թատրոնը կապալով վերցնելու:

Փոխարքան հրաման է արձակել, որի հիման վրա ժողովրդական անկարգութիւնները ճնշելու ժամանակ սպանված զինւորական պաշտօնեաների ընտանիքները պէտք է ստանան գանձարանի կենսաթոշակային բաժանմունքից նոյնպիսի նպաստ, ինչպէս որ ստանում են պատերազմում սպանված զինւորական պաշտօնեաների ընտանիքները:

Փետրվարի 28-ին Մետեխի բերդից ազատվել է Թիֆլիսի պոստ-հեռագրական պաշտօնեաների միութեան բիւրօյի անդամ պ. Պաւել. շուտով ազատվելու են միւսները նոյնպէս:

Երկու օր սրանից առաջ, Թիֆլիսի այգեգործական ուսումնարանի բարձր դասարանի 9 աշակերտներ ուսումնարանի կառավարչի ուղեկցութեամբ գնացին Ալղեթանի խաղողի որթերի արքունական տնկարանը, որթերի պատրաստման գործնական պարապմունքներ կատարելու համար:

Մեծ պասի 5-րդ շաբթից Թիֆլիսի արքունական թատրոնում Կրուչինինի խումբը, յայտնի կոմիկ Վարլամովի մասնակցութեամբ, սկսելու է իր դրամատիքական ներկայացումները: Իսկ օպերէտային խումբը կը տեղափոխվի Բագու:

Քաղաքային վարչութիւնը որոշել է խնդրամատոյց լինել ադմինիստրացիային վերացնելու Աւչալեան Ջրանցքային կայարանի մօտ նշանակված պահակների հսկողութիւնը: Այդ պահակները բաղկացած են. մի սպայից և 36 զինւորներից: Քաղաքը վճարում է սպային օրական 3 րուբլի, իսկ իւրաքանչիւր զինւորի համար 25 կոպէկ:

Բժ. Ժ. Տէր-Միքայէլեանցը դիմել է թոյլտուութիւն ստանալու հրատարակելու Թիֆլիսում հայերէն լեզուով մի շաբաթաթերթ «Իրաւունք» անունով:

Վերջին ժամանակներս զանազան քաղաքներից և գիւղերից խմբերով գալիս են մեր քաղաքը, զանազան անձինք, որոնց մէջ կան և շատ հայ գիւղացիք և դռնապանի պաշտօն են որոնում: Վերջիններիցս շատերը գտել են տեղեր, իսկ շատերը չը գիտեն ում դիմեն և ընկնելով անծանօթ քաղաք՝ դժուար դրութեան մէջ են գտնվում: Քաղաքային վարչութիւնը կարող է լաւ ծառայութիւն անել, եթէ կարգադրէ առևտրի վրայ հսկող իր բազմաթիւ գործակալներին, ագենտներին ցուցակագրել դրանց և ներկայացնել քաղաքային վարչութեան առեանը՝ յանձնելով այդ գործը մի յատուկ անձի և յայտարարելով հասարակութեանը—դիմել դռնապան վարձելու համար քաղաքային վարչութեանը: Այս կարգադրութիւնը երկու կողմերի համար էլ օգտաւէտ է, իսկ գործակալները, որոնք զանազան մասերում բուտկաներ ունեն և շրջում են—հեշտութեամբ կարող են այս օգնութիւնը հասցնել:

Այսօր նշանակված է քաղաքային դումայի արտակարգ նիստը Թիֆլիս քաղաքի համար ընտրողական մասնաժողովի անդամներ ընտրելու նպատակով:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Ի. Ի. Տոլստոյ նամակով դիմել է կոմս Վիտտէին Բարձրագոյն դպրոցները բանալու առիթով: Նամակում նա շեշտում է, որ ինքը կառավարութիւնն է ստեղծում իրերի այնպիսի դրութիւնը, որոնց ժամանակ Բարձրագոյն դպրոցները բանալ և կանոնաւոր պարապել անկարելի է: Օրինակ, Խարկովից և Տօմսկից աքսոր են ուղարկվել ուսանողութեան մէջ ամենամեծ հեղինակութիւն վայելող պրոֆեսորները, առանց որոնց աջակցութեան չէ կարելի անգամ մտածել Բարձրագոյն դպրոցները բանալու մասին: Միայն նրանց ներկայութիւնը կարող կը լինի ստեղծել ուսումը սկսելու համար բարեյաջող միջնոլորտ: Հասարակութիւնը այնքան է գայրացել րէպրէսսիաներից, որ եթէ նոյն իսկ աչողվէր էլ բանալ Բարձրագոյն դպրոցները, այնուամենայնիւ ուսանողների մէջ խլոյն նոր յուզումներ կը բըռնկվէին: «Страна»

Տուլայից «Рус. Слово» թերթին հեռագրում են. փամփուշտներ պատրաստող գործարանը, Պետական Դումայի բոյկոտ յայտարարելու պատճառով, որոշել է արձակել 2000 բանւորների:

«Рус. Сл.»-ին հեռագրում են Կիեվից՝ Նահանգապետը իր շրջաբերականում յիշում է, որ գիւղացիները զինվում են: Հրամայված է կասկածելի ծանրոցները պոստատանը բաց անել:

Գիլեսկի գաւառից տեղեկութիւն է ստացվել, որ տեղական ժանդարմների ռոտմիստր Բարանովը կազմակերպում է հասարակութեան տականքներից սև հարիւրեակի խմբեր «կռւելու ագիտատորների, սօցիալիստների և անարխիստների» դէմ: Գաւառում կազմվել է մի միութիւն, որը նոյնպէս մի և նոյն նպատակն է ընտրել: Թէ միութիւնը և թէ սև հարիւրակները սկսել են իրանց գործունէութիւնը: «Рѣчь»

Ինչպէս հաղորդում է «Рѣчь»-ը, մօտ օրերումս արքունական բոլոր գործարաններին ուղարկված է Ներքին գործերի մինիստրի մի շրջաբերականը, որով հրամայվում է այդ գործարաններում բանող բոլոր հրեայ բանւորներին արձակել պաշտօնից, որպէս «անյուսալի» տարր: Այդ շրջաբերականը արդէն ունեցաւ իր ներգործութիւնը Օբուխովսկի գործարանում, որտեղ մօտիկ ժամանակներս արձակեցին հրեայ բանւորներին: Այդ բանւորների, որոնցից շատերը ծանրաբեռնված են ընտանիքներով, դրութիւնը անելանելի է:

Քաղաքային վարչութիւնը ստացել է Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցող անձանց ցուցակները, Թիֆլիսի հետևեալ հաստատութիւններից ևս. Թիֆլիսի նահանգապետի դիւանատնից, Կոժմերչեւսկի ուսումնարանից, կադետների ուսումնարանից, կովկասեան շրջանային ինժեներների վարչութիւնից, Անդրկովկասի մուսուլմանների սիւննի դաւանութեան հոգևոր վարչութիւնից և Ուսէլների վարչութիւնից:

Քաղաքիս մէջ հասարակական բարքերը քայքայող և ընտանեկան կեանքը կազմալուծող ֆակտորների թւում առանձին դեր են խաղում այսպէս անուանեալ կաւատուհիները (միջնորդ), որոնց արարքների մասին մինչև այժմ մամուլը, կարելի է ասել, եթէ ոչ յանցաւոր լռութիւն, գոնէ միանգամայն մոռացութեան է տուել: Քանի անմեղ զոհեր են որսում այդ մարդավաճառ տղրուկները: Օրէնքը այդ հասարակական տականքի անդամներին կաւատութեան համար պատժում է բանտով, բայց այդ մի քանի ամսով բանտարգելութիւնը նրանց չէ խանգարում նորից շարունակելու իրանց զզուելի արհեստը: Դրանցից մի քանիսը բուն էին դրել քաղաքիս 9-դ մասում, որոնցից մէկը մի քանի շաբաթ առաջ սրախողխող եղաւ, մէկը բանտի մատնվեց՝ այս օրերս 2 հոգի քաղաքիս 2-դ մասից արժանի պատիժը ստացան և դուրս վռնդվեցին: Փետրվարի 27-ին ևս քաղաքային 8-դ մասից մի այդ տեսակ կաւատուհի—Օլ. Շ—որը իր բնակարանը կաւատութեան բուն էր դարձրել, բռնվեց և քաղաքիցս վռնդվեց: Հասարակութեան և մամուլի պարտքն է անխնայ և առանց քաշվելու հալածել այդ չար ոգիներին, որոնց լեզուից հասցրած վէրքերը շատ աւելի ծանր են սրերից:

Մերձաւոր ապագայում առանձին խորհրդակցութիւն կը կայանայ, ֆինանսների և կոնտրոլի տեսչութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ, բոլոր մինիստրների և գլխաւոր վարչութիւնների ելևմուտը կրճատելու հարցը քննելու համար: «Стр.»

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարգադրութիւն է արել, որ միջնակարգ դպրոցների գրադարանների և ուսուցչարանների համար բերել տրվեն միայն գիտական բովանդակութիւն ունեցող հրատարակութիւններ: Ընդհանուր բնաւորութեամբ լրագիրներն ու թերթերը արգելվում են ստանալ:

Ինչպէս տեղեկացել է «Страна» թերթը, Ռոգոմում ժանդարմների օֆիցէրը զօրախմբով խուզարկութիւն է կատարել տեղական նահանգական դատարանի շինութեան մէջ: Խուզարկել են դատախազ Շալիմովի դատարանի նախագահ Զէլանդի և նախագահի օգնականներ՝ Սօրօչէվի և Մուսօրովի առանձնասենեակները:

Զինւորականների մէջ յամառ լուր է պտտում մի Բարձրագոյն հրովարտակի մասին, որը պէտք է յայտարարվի մօտ օրերումս: Այդ հրովարտակի հիման վրա զինւորների ծառայութեան ժամանակամիջոցը 6 ամսով կը պակասեցնվի և սեպտեմբերին վերջացնողները կարձակվեն պահեստի համար մայիսին: «Страна»

Պետերբուրգում Բօրիսօվի և Գօլուբէվի գործարանները պետական պատուէրներ են ստացել մի քանի հազար շղթաներ պատրաստելու: Ստիպված եղան մասնաւոր գործարաններին դիմելու, որովհետև Բալտիկեան բանտի դարբինները գործադուլ արեցին:

Շուից ստացվել են անհանգիստ լուրեր. բանւորների տրամադրութիւնը չափազանց լարված է. խլրտումները սաստկանում են և սպառնում ընդհանուր գործադուլ առաջ բերել:

Մոսկվայի գործարաններից շատերի մէջ բանւորական ժողովներ են կայացել որոշելու համար թէ ինչպիսի դիրք բռնել դէպի Դուման: Մեծամասնութիւնը վճռեց հրաժարվել ընտրութիւններին մասնակցելուց:

Մինսկի նահանգի հնածէս ազնուականները հաւաքական խնդիր էին ուղարկել Ներքին գործերի մինիստրի անունով և թոյլտուութիւն էին խնդրում հրէական ջարդեր կազմելու, որովհետև նրանց կարծիքով «Թանկագին հայրենիքի ներկայ դժբաղդութիւնների» պատճառը հրէաներն են: Մինիստրը այդ խնդրի վրա մակագրեց. «Սրա մասին տեղեկացնել Մինսկի նահանգապետին»: Միևնոյն ժամանակ, ոստիկանութեան դեպարտամենտի կարգադրութեամբ, Մինսկի նահանգն ուղարկվեցին երկու փորձված գործակալներ տեղի վրա ծանօթանալու հնածէսների այդ տեսակ տրամադրութեան պատճառների հետ: Գործակալներից տեղեկութիւն է ստացվել, որ հնածէս ազնուականները շարունակում են պատրաստվել ջարդեր առաջ բերելու համար, որոնց սկիզբը նրանք որոշել են Զատիկ օրերին:

Ներքին գործերի մինիստրը հրամայել է Մինսկի նահանգապետին անմիջապէս զօրախմբեր ուղարկել այն քաղաքները և գիւղաքաղաքները, որտեղ կարելի է անկարգութիւններ սպասել։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի լոյս 20-ի գիշերը անյայտ չարագործները կոտրելով Նիկողայոս Ստեփանեանի խանութի (Իվիլերնի պերէուլօկ՝ տուն Ամիրխանեանի) կողպէքը, ներս են մտել խանութ և գողացել են 21 սամօվար 168 ½ րուբլի արժողութեամբ, 4 հատ կարի մեքենաներ 110 րուբլի արժողութեամբ, ընդամենը 278 րուբլի։

Փետրվարի 28-ին մօտաւորապէս երեկոյեան ժամի 10-ին Սալեօրնի փողոցում պլաստուն կազակների բատալիօնի մօտ, նոյն բատալիօնի պահապանները երբ, որ փոխվում էին, փամփուշտը հրացանի փամփշտաբանում մնալիս՝ հրացանը պայթվեց օդի մէջ, առանց որ և է վնաս տալու։

Փետրվարի 28-ին, մօտաւորապէս կէսօրվայ ժամը 5-ին քաղաքին պատկանող քարէ տան, որը Ալեքսանդրեան այգու մօտ է գտնվում, 4-րդ յարկից տախտակը խախուտ լինելուց կոտրվեց և ընկան 3 բանւոր քարգործներ, որոնցից մէկը լուրջ իսկ միւսը, վտանգաւոր կերպով վէրքեր ստացան։ Վիրաւորվածներին ուղարկեցին քաղաքային Միքայէլեան հիւանդանոցը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, փետրվարի 15-ին

Վերջապէս, մի տարվայ տարագրութիւնից յետոյ, քաղաքս վերադարձաւ կրօնապետ Միրզա-Հիւսէյն-աղան։ Մուսուլման ժողովուրդը չը տեսնված հանդիսաւորութեամբ ընդունեց իր սիրելի կրօնապետին, որի շատ յարմար րօպէին գալը հանգստացրեց Ուրմիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Խիստ տարածված լուր է, որ յիշեալ մուշտէիդի վերադարձման խնդրում հայերը դեր ունեն, այս բանը թուրք ժողովուրդը իբրև ճշմարտութիւն է ընդունում, և արդէն փոխում է իր վերաբերմունքը դէպի հայը, հէնց ինքը, Միրզա-Հիւսէյն-աղան մեծ գոհունակութիւն յայտնեց Դեարդաքաթ հայ գիւղի առաջը բերված մատաղի համար, կառքը կանգնեցրեց և ասաց. «Շատ շնորհակալ եմ իմ հայ եղբայրներից, ոչ մի թուրք գիւղ ինձ համար մատաղ առաջ չը բերեց. ուրախ եմ, ինչպէս էք, առողջ էք»։ Յոյս ունենք, որ մօտակայ մուհարրամը մի դժբախտութիւն չի բերի մեր գլխին։ Դատաւոր Իմամ-Ղուլի-Միրզան դժբախտաբար հեռացաւ իր պաշտօնից։

Մի խումբ երիտասարդներ Վարդանանց տօնին գլուխ բերին մի շքեղ ներկայացում։ «Արշակ Բ.»-ը և «Արևելեան ատամնաբոյժ»-ը։ Խաղը շատ աջող էր։ Ժողովուրդը առաջին անգամն էր տեսնում այդպիսի փառաւոր բան։ Մուտքը աջող էր։

Ի դէպ. մի ուրիշ ներկայացման ժամանակ քաղաքի եկեղեցում թէյ (ասում են նաև խմիչք) է վաճառվել. այս և ուրիշ մի քանի խնդիրների համար ժողովրդի պահանջմամբ Գործակալ Աբրահամ վարդապետը ծխական ժողով գումարեց։ Ժողովը որոշեց խիստ պատժի ենթարկել եկեղեցին սրբապղծողին։ Վարդապետը իր ապիկարութեամբ անկարող եղաւ պատժել իր իրաւասութեան տակ եղած եկեղեցին «չայչիխանա» դարձնողին, դիմեց տեղիս սարփարաստին, բայց ահա մի պարոն, չը գիտենք ինչ հաշիւներով առաջնորդված, պաշտպանում է յանցաւորին և իր բարեկամ սարփարաստին արգելում է պատժել յանցաւոր գինեվաճառին։ Այդպէս մնում է մինչև այսօր. ժողովուրդը վիրաւորված է զգում իրան։ Արդ, մի սովորական մարդ ինչ իրաւունքով իրան թոյլ է տալիս կոտրելու տեղիս հայ հոգևոր իշխանութեան ներկայացուցչի հեղինակութիւնը, որ առանց այն էլ ողորմելի վիճակի մէջ է, և խայտառակելու պատիժը ոբաշող ծխականներին։

Պարզապէս ասում ենք, եթէ մի մարդ գտնվէր նախանձախնդիր ազգի պատւին, կը ստիպէր գործակալ վարդապետին սրբելու մեր բոլորիս նախատինքը և վերջ կը դնէր մինչև այժմ տիրող ապայական անսանձ կամայականութիւններին, հակառակ դէպքում թող հրաժարվի, որ ուրիշ միջոցի դիմվի։ Բայց աւաղ մի մարդ էլ չէ ճարվում այստեղ, որ միւսներին քաշ տայ և գործի մէջ մտնէ։ Գործակալ վարդապետի գոյութիւնն աւելորդ է այստեղ։

Ներկայ տագնապալի ժամանակներում այս վէրքերն էլ, որ բացվում են, մարդ յուսահատվում է։ Վարդապետը իր հացի փողը ձեռք բերելու համար ստիպված է կամ գիւղերում թափառել կամ ուրիշ միջոցների դիմել. նա վերջերս իրան թոյլ տուեց հրամանագրել մի 12 տարեկան տղայի և 15 տարեկան աղջկայ պսակը. ասում են... 3 թուման կաշառք է վերցրել։ Էջմիածինը երբ պէտք է մի կարգին մարդ ուղարկէ այստեղ, որ մաքրէ այս անպէտք քահանաների դէզադէզ «Աւգեան գոմը». բացառութեամբ մի քանիսի, բոլորը փիլոնազուրկ և պատժված քահանաներ են, բայց երբէք չեն ենթարկվել։ Ատրպատականի թեմը թափուր է, Էջմիածինն էլ հեռու է, անտարբեր, հապա ում դիմենք։ Տեղիս ծաղկեալ միսիոնարութիւնները օրէց օր աջողութիւններ են ձեռք բերում մեզանում. փող են բաժանում և հաւատ գնում։ Թանգութիւնը սարսափելի է, շաքարի լիտրը եղաւ 16 ղռան (առաջ 5 ղռան էր). այդպէս էլ դրսից եկած ամեն բան։ Սովամահութեան դէպքեր են պատահել։ Աւելի վատ է թուրք գիւղացու դրութիւնը։

Ուրմիայում միակ մխիթարական բանը Թաւրիզի Հայուհեաց պահած դպրոցներն են, որոնք այս 5—6 տարվայ ընթացքում առաջ են բերել զօրեղ մրցութիւն օտար հաւատորսների դպրոցների դէմ, որոնք 10—15 թումանով վարձում են անգրագէտ ուսուցիչներ, որոնց տուած արդիւնքը զրօից պակաս է լինում, տարվայ վերջում ուսուցչի և աշակերտների պատկերները հանում են և ուղարկում Ամերիկա, որպէս գի ոսկու աղբիւրները չը ցամաքեն։ Ընկերութեան դպրոցները, հնար եղած չափով, համապատասխանում են մանկավարժական պահանջներին. շէնքերը կանոնաւոր են, ունեն գրատարան և այլն յարմարութիւններ։ Պարզ է, որ 20 թումանից ոչ աւելի ծախս վերցնող միսիոնարների դպրոցները չը պիտի կարողանան մրցել մինչև 300 թուման ծախս ունեցող ընկերութեան դպրոցների հետ։ Ուրմիայի հայը երախտագէտ պիտի լինի դէպի յիշեալ բազմարդիւն ընկերութիւնը։

Գիժ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բեռլինից հեռագրում են «Русь» թերթին. «Բեռլինի կառապանները իրանց չափազանց ազատ են պահում։ Կայսրի հարսանիքի քսանհինգամեակի օրը, երբ ամբողջ Գերմանիան, մանաւանդ Բեռլինը, հանդիսաւոր տօնում էր այդ օրը և բոլոր կրպակներում փայլում էին կայսերական զոյգի բիւստերը, Բեռլինի կառապանները դէմօնստրատիվ կերպով գործադուլ էին արել... Փողոցները դատարկվել էին։ Խայտառակութիւնը հսկայական էր և տևեց երկու օր։ Մաքսիմ Գորկին եկաւ այն ժամանակ, երբ գործադուլը վերջանում էր, բայց կառքեր քիչ կային։ Գորկին, առանց երկար ու բարակ մտածելու, պայուսակը ձգեց ուսը, նստեց օմնիբուս և այնպէս գնաց քաղաքի կենտրոնը։ Մի մարդ ճանաչեց գրողին։ Րօպէաբար լուրը տարածվեց. ամբողջ Ֆրիդրիխշտրասսէյի երկաթուղային ահագին կայարանը և մի քանի տասնեակ բեռնակիրներ և արհեստաւորներ դուրս վազեցին տեսնելու «Nachtacyl» (На Днѣ)-ի հեղինակին։ Նրանք ամենքն էլ գլխարկները վերցնելով ողջունում էին... Գորկին մի ձեռքով բռնել էր պայուսակը, իսկ միւսով պատասխանում էր ողջոյններին։ Մ. Գորկին կը մնայ այստեղ մի քանի օր իր գրականական-հրատարակչական գործերը կարգի բերելու համար, իսկ յետոյ գնալու է դէպի հարաւ։ Նրա հետ համարեա միաժամանակ այստեղ եկաւ և նրա ընկերուհին, դերասանուհի Անդրէևան, որը գուցէ այստեղ բեմ դուրս գայ Հաուպտմանի «Einsame Menschen»-ում (Միայնակ մարդիկ)։ Նրա ներկայացնելը դեռ ևս Մոսկվայի Գեղարուեստական թատրօնը վերջնականապէս չէ վճռել։ Մաքսիմ Գորկին «Deutche Theater»-ում կը կարդայ իր պիէսներից մէկը»։

—Աւստրօ-Ունգարիա։ Բուդապէշտում Կոլոման-Սէլլ մի ճառ արտասանեց, որով ապացուցանում էր, որ ունգարական սահմանադրութեան մի մասը արդէն ոչնչացրած է, և պահանջում էր շուտափոյթ վերականգնել օրինական կարգերը։ Կօշուտը և Ապպօնին պատրաստվում են այցելելու եւրօպական գլխաւոր մայրաքաղաքները և դասախօսութիւններ կարդալ ունգարական պարլամենտական վէճի մասին։ Կառավարչական շրջաններում լուր է պտտում, որ ընդհանուր ընտրողական իրաւունքը մտցնելու ծրագիրը թողնված չէ, ունգարական մերձաւոր պարլամենտի ամենագլխաւոր խնդիրը կը լինի նրա քննութիւնը։

—Աւստրօ-Ունգարիա։ Բարօն Ֆէյէրվարի մինիստրական վերջին խորհուրդում զեկուցում տուեց իր ունկնդրութեան մասին կայսեր մօտ։

Գլխաւոր նորութիւնը այն է, որ ունգարական կառավարութիւնը շուտով չէ վերադառնալու սահմանադրական ուղին։ Նոր ընտրութիւնները չեն նշանակվելու երեք ամսվայ ընթացքում, ինչպէս այդ հրամայում է սահմանադրութիւնը։ Կառավարութիւնը կարծում է, որ ընտրութիւնները ոչ մի լաւ փոփոխութիւն չեն կարող առաջ բերել քաղաքական դրութեան մէջ, քանի Կոալիցիան պնդում է իր նախկին ծրագրի վրա և յամառաբար կրկնում է, որ զինուորական-ազգային պահանջները չեն նսեմացնում թագի գերագոյն իրաւունքները։ Ընդհանուր ընտրողական իրաւունքը կառավարութիւնը դեռ չէ մտցնում, իսկ ներկայ ընտրութիւններով պէտք է անպատճառ երկարատև ագիտացիա անել յօգուտ կառավարական «պրօգրէսսիվ կուսակցութեան»։ Մօտ օրերում լոյս կը տեսնի մի կոչ նորակոչ զինուորներին կանչելու համար. բոլոր պետական դրօշակի տակ որոշ ժամանակից ոչ ուշ խմբվողները կը ստանան զանազան արտօնութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 փետրվարի

ՄՈՍԿՎԱ, 27 փետրվարի։ Մոսկվայի նահանգի 300 հաստատութիւններից միայն երեքը չը կամեցան ընտրել բանւոր լիազօրներ։ Մոսկվայում ընտրութիւնները նշանակված էին 339 ձեռնարկութիւնների մէջ. ընտրութիւններին մասնակցում էին 65%-ը, իսկ 7%-ը միայն ձեռնպահ մնաց։ Սօցիալ-դեմօկրատների ագիտացիան արդիւնք չունեցաւ։ Մոսկվայի ընտրողների թիւը վերջնականապէս հաշւվում է 55221 մարդ։

ԱԼԺԵՍԻՐԱԶ, 27 փետրվարի։ Խմբագրական յանձնաժողովի երէկվայ և այսօրվայ առաւօտեան նիստերում չաջողվեց մշակել բանկ հիմնելու և ոստիկանութեան կազմակերպութեան նախագծերը։

ԲԵԼԳՐԱԴ, 27 փետրվարի։ Լրագրները հաղորդում են Լօնդօնի հաստատ աղբիւրից իրանց ստացած տեղեկութիւնները, որ Էդուարդ թագաւորը մարտի կէսին կայցելէ Անտիվարի Չերնօգօրեան իշխանին և կը դիտէ զօրքը։ Սպասվում է, որ գերմանական կայսրն էլ այցելէ Չերնօգօրիա։

ՊԱՐԻԶ, 27 փետրվարի։ Քաղաքային ինքնավարութեան նախագահ ընտրված է արմատական Շոտանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Լրագրների ասելով, Ներքին գործերի մինիստրը բացատրել է, թէ ժողովրդական ինքնապաշտպանութեան զինված միութիւնները՝ յեղափոխութեան դէմ կռւելու համար—անթոյլատրելի են, ինչպէս և զինված համախմբումներ սարքելը՝ յեղափոխութիւն անելու համար։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 27 փետրվարի։ Բանւորական սահմանադրական դաշնակցութեան ժողովին ներկայ էին 15,900 հոգի, որոնք միաձայն որոշեցին չը յարել գործադուլին, եթէ առաջարկվի Կարմիր անձնապաշտպանական խմբի կամ բանւորական կուսակցութեան բիւրօյի կողմից։

ԲԵԼԳՐԱԴ, 27 փետրվարի։ (Բիւրօի Թղթ.)։ Թագաւորը գեներալ Գրուիչին յանձնարարեց կաբինէտ կազմելու գործը։ Նոր մինիստրութեան կազմի մէջ երևի կը մտնի Ստոյանովիչի կաբինէտի մինիստրների մեծ մասը։

ՊԱՐԻԶ, 27 փետրվարի։ (Հավաս)։ Սարիէնի մօտ կայացած ժողովը եկել է մօտաւորապէս հետևեալ որոշման, պօրտֆէյլների բաժանման գործում.—Սարիէնը լինելու է մինիստր-նախագահ ու արդարադատութեան մինիստր, Բուրժուան՝ արտաքին գործերի, Կլէմանսօն՝ ներքին գործերի, Պուանկարէն՝ ֆինանսների, Էտիէնը՝ զինուորական, Տօմսօնը՝ ծովային, Բրիանը՝ լուսաւորութեան և կրօնի, Բարթուն՝ հասարակական աշխատանքների և պօստ-հեռագրատան, Ռիօնը՝ երկրագործութեան, Լէյգը՝ գաղթավայրերի։ Ժողովը համաձայնութեան է եկել նաև՝ կաբինէտի ծրագրի մի քանի կէտերի վերաբերմամբ, առաւելապէս եկեղեցական գոյքերի ցուցակագրութեան և եկեղեցին՝ պետութիւնից բաժանելու օրէնքը գործադրելու վերաբերմամբ։ Վերջնական համաձայնութիւն չէ կայացած սինդիկատների հարցի, ինչպէս և ուրիշ մի քանիսների վերաբերմամբ։ Վաղը կայանալու է յետագայ մինիստրների նոր ժողով. նրանց ասելով, համաձայնութիւնը, համարեա երաշխաւորված պիտի համարել։ Սարիէնը երեկոյեան յայտնեց Ֆալիէրին բանակցութիւնների ելքի մասին։

1 մարտի

ԼՕՆԴՕՆ, 27 փետրվարի։ (Րէյտեր)։ Համայնքների պալատում Օլդէնը հարցապնդում արեց թէ մտադի՞ր է արդեօք կառավարութիւնը օգտվել առաջին յարմար դէպքից առաջարկելու Գերմանիային, որ նա կրճատէ զինման համար արած ծախքերը։ Մինիստր-նախագահը պատասխանեց թէ Գերմանիան ուժեղացնում է իր նաւատորմը, երկրի, գլխաւորապէս առևտրի պահանջների համաձայն. «Ես յաճախ հասարակութեան ներկայութեամբ մատնացոյց եմ արել, որ ցանկալի է կրճատել զինման ծախքերը։ Կառավարութիւնը աւելի չի բաց թողնի հասնելու կարելի հետեւանքների այդ ուղղութեամբ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Պաշտօնական։ Ի նկատի ունենալով տարածված լուրերը, որ շաքարի արդիւնաբերութեան ներկայ ընկերութիւնը բոլորովին անօգուտ անցաւ, որ մօտիկ ապագայում ազգաբնակութեան սպառնում է շաքարի սով, բայց որ և շարունակվում է արտահանվել դէպի արտասահման սահմանակից ժողովրդի կարիքներին բաւարարութիւն տալու համար, մենք լիազօրութիւն ունենք յայտնելու, որ Կայսրութեան շաքարի գործարաններից այս տարի արտահանած շաքարի քանակութիւնը հասնում է 65,992,891 պուդի։ Սրանից երկրի ազգաբնակութեան համար յատկացված է 54 միլ. պուդ. բացի այդ՝ գործարաններում ներկայումս կան անձեռնմխելի կրկին 4 միլ. պուդ, որ պիտի ծախվի երկրի ներսում, եթէ շաքարի սակագինը բարձրանայ օրէնքով սահմանած գնից։ Այդպիսով ներքին վաճառման համար կայ ապահոված 58 միլ. պուդ շաքար։ Մեծ պահանջը կարելի է բացատրել նրանով, որ անցեալ 1904—1905 թ. շաքարի արդիւնաբերութիւնը գնել է գործարաններից ներքին պահանջի համար 54½ միլ. պուդ շաքար, բայց այդ քանակութիւնն էլ չը վաճառվեց նոյն ժամանակամիջոցում և նրա մեծ մասը, որ չէ մտնում վերոյիշեալ 58 միլ. պուդի մէջ մնաց շաքարի պահեստներում։ Իսկ ինչ վերաբերում է արտասահման արտահանած շաքարին, վերջին տեղեկութիւնների համաձայն երևում է, որ մինչև 1906 թ. փետրվարի 19-ը, սկզբից, այսինքն՝ 1905 թ. Սեպտեմբերի 1-ից արտահանած շաքարի քանակութիւնը կազմում է մօտ 1 միլ. պուդ, անցեալ շրջանի հէնց այդպիսի ժամանակամիջոցում, արտահանածի հակառակ։

ԼՕՆԴՕՆ, 27 փետրվարի։ (Րէյտեր)։ Համայնքների պալատում այն հարցի քննութեան առթիւ՝ որ անգլիական իշխանութիւններն արգելում են ռուս փախստականներին վերադառնալու, Հերբերտ Գլադստօնը ասաց, որ կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնէ թեթևացնելու այն ճնշումները, որոնց ենթարկվում են ռուս գաղթականները։ Առանձին ուշադրութիւն կը դարձնվի այնպիսի պետութիւններից գաղթածների վրա, որտեղ ներկայումս խռովութիւններ են տեղի ունենում։ Այն հարցին թէ՝ յայտնի՞ է արդեօք արտաքին գործերի ստատս-սէկրետարին-Ռուսաստանի և Գերմանիայի մէջ՝ գաղթականներին փոխադարձաբար յանձնելու առթիւ կայացած համաձայնութեան մասին, Բէկսիմէնը յայտնեց, որ այդպիսի համաձայնութիւն գոյութիւն չունի։ Այդ հարցը անկասկած յարուցել են լրագիրները, որ գերմանական նաւահանգիստներից Անգլիա եկող ռուս փախստականները, Անգլիայի թոյլ չը տալու պատճառով, վերադառնում են Գերմանիա և որոնց գերմանական իշխանութիւնները յանձնում էին Ռուսաստանին։

ԲԵՌԼԻՆ, 27 փետրվարի։ Կայսեր հրամանագրութեամբ արևելա-ասիական զօրաջոկը վերադառնում է Գերմանիա։ Չինաստանում է մնում 26 օֆիցերներից և 700 զինուորներից բաղկացած մի զօրաբանակ։

ՍՕՖԻԱ, 27 փետրվարի։ Սանդօսը, որ մեղադրվում է լրտեսութեան մէջ, դատապարտված է մէկ տարվայ բանտարկութեան։ Դատաստանական քննութեան ժամանակ ներկայ էր ֆրանսիական դիպլօմատիական գործակալութեան քարտուղարը։ Թիւրքիայ կառավարութիւնը տեղեկացրեց Սանդօսին, որ նա իրաւունք ունի վերադառնալ Թիւրքիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի։ Հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր կառավարչի պաշտօնակատար նշանակված է պետական խնայողական գանձարանների կառավարիչ Ա. Պ. Նիկոլսկին։

ՌՕՄՆԻ, 28 փետրվարի։ Վաճառական դասը միացաւ Սարատովի վաճառականական ընկերութեան միջնորդութեան, որով խնդրվում էր աւելացնել Պետական Խորհրդի անդամների թիւը և ընտրութիւնները կատարել այնպէս, որ մասնակցէ Ռուսաստանի ամբողջ վաճառականական դասը։ Այդ մասին հեռագրված է կոմս Վիտտէին, ներքին գործերի ֆինանսների և առևտրի մինիստրներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի։ Փետրվարի 23-ին Կայսրը ընդունեց շրջանային դատարանների, շինական տանուտէրերի և Դոլժանսկի շրջանի, Տուլայի նահանգի 21 գիւղերի պատգամաւորութեան։ Ընդունելով ամենահպատակ գրութիւնը և սրբի պատկերը, Կայսրը բարեհաճեց դիմել պատգամաւորներին հետևեալ խօսքերով. «Սրտանց շնորհակալ եմ ձեր արտայայտած զգացմունքների, սուրբ պատկերի և գրութեան համար։ Հաղորդեցէք ձեր շրջանի բոլոր շինականներին Իմ սրտանց շնորհակալութիւնը՝ նրանց դէպի Ինձ տածած սիրոյ և հպատակութեան համար, որոնք Ինձ չափազանց ուրախացնում են։ Գիւղացիների երջանկութիւնը միշտ Ինձ առանձին հոգս է պատճառում։ Տալիս եմ պատուէր, չանսալ կարգը խանգարող թշնամիներին, որոնք շրջում են գիւղերը և շէները խռովութիւն սերմանելու և գիւղացիներին ապստամբեցնելու նպատակով։ Բայց նրանց դուք ինքներդ մի դիմադրէք, այլ յանձնեցէք նրանց իշխանութիւններին, որոնք կը վարվեն նրանց հետ օրէնքի ամբողջ ոյժով։ Վերադարձէք հանգիստ ձեր տեղերը։ Դարձեալ շնորհակալ եմ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի։ Ցէնզուրական կօմիտէտի վճռաբեկ բողոքները, հաշտարար դատարանի «Наша Жизнь» լրագրի խմբագիր Խօդսկուն արդարացնելու առթիւ ներկայացրած, անուշադիր են թողնված հաշտարար համաժողովի կողմից։

ՆՈՎՕՐՕՍԻՅՍԿ, 28 փետրվարի։ Փոխարքայի հրամանագրութեամբ՝ Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցել ցանկացողները պէտք է գրաւոր կերպով յայտնեն մարտի 24-ին։

ԿԱԼԻՇ, 28 փետրվարի։ «К. Г.» լրագիրը հաղորդում է, որ կաթօլիկ հոգևորականութեան նիստում, արքեպիսկոպոսի նախագահութեամբ, քննվում էր մարիաւիտների գործը։ Վճռված է նորից մարիաւիտների վրա ազդել յորդորներով և ընտրել մի յանձնաժողով հարցը ուսումնասիրելու համար։

ՊԱՐԻԶ, 28 փետրվարի։ Սարիէնը և նրա համախոհները շարունակում էին նոր կաբինէտի ծրագրի քննութիւնը։ Համաձայնութիւն է կայացել գլխաւոր հարցերի վերաբերմամբ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՀՐԱՉՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վերաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ի. Գ. [illegible]—1—1½ ժ. ներքին և երեխայ. հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԴՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԻՐԻԿՈՒՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Տ. ԱԲԵԼԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհուրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Հ Ի Ւ Ա Ն Դ Ա Ն Ո Ց
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱԶԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—Ջղային, ներքին հ. և էլեքտրօ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒՍՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԲԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԵՑԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկւում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից։
(չ. ու. կ.) 40—100

«ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ» ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
Վաճառվում են հետևեալ գրքերը
Մայրենի լեզու, Աղայեանի, նոր տպագր. ա. տ. 20 կ.։
» » Տէր-Ղևոնդեանի, նոր տպագր. ա. տ. 25 կ.։
» » Արարատեանի, նոր տպագր. ա. տ. 25 կ.։
Հայ հեղինակներ, Վանցեանի 1 ր.։
Նախաշաւիղ, Կոստանեանի 25 կ.։
Վիճակացոյց աշակերտի ուսմանց, վարուց, բացակայութեան և քննութեան 10 կ.։
Մի և նոյն Դագաղում, Նսայեանի պատկերազարդ 7 կ.։
Նախագիծ Հայաստանեայց եկեղեցու սահմանադրութեան, Արս. վ. Ղլճեանի 7 կ.։
Հայրիկ-Հայրիկ (романсъ), Բաբխուդարեանի 50 կ.։
Եղիշէի պատմութիւն Վարդանանց, ըստ Անձևացեացն օրինակի, (ընտիր թղթի վրա տպած) 20 կ.։
Նոյնը շքեղ կազմով 60 կ.։
Ատրպատական, Ֆրանգեանի 1 ր. 50 կ.։
Ալմաստ, 2 հատոր Աւրպետի 2 ր.։
Էփրեմվերդի (նոր տպագրութիւն) պատկերազարդ կազմած, Մանդակունու 5 ր.։
Պատկերներ, Ահարոնեանի, բ. տպ. 1 ր.։
Ռուսահայ գրականութիւնը, սկզբից մինչև մեր օրերը, (բանաստեղծութիւն, թատերագրութիւն, վիպագրութիւն) 1 ր. 50 կ.
Դաւիթ-բէգ, Րաֆֆիի 3 ր. 50 կ.։
Ինքնավարութիւն և Զեմստվօ, Բէլօկօնսկու 15 կ.։
Տնտեսական զրոյցներ, Կարշևի 40 կ.։
Տնտեսական և սօցիալ-քաղաքական հարցեր Զոմբարտի 10 կ.։
Ի՞նչ է ազգութիւնը, Ռենանի 20 կ.։
Իդէալիզմ և մատերիալիզմ, Լաֆարգի 10 կ.։
Կապիտալ և կապիտալիզմ, Գուլլէ 12 կ.։
Կօլօնիական քաղաքականութիւնը անցեալում և ներկայում, Լաֆարգի 40 կ.։
Իրաւունքի ծագումն ու պատմութիւնը, Ալեքսէևի, 10 կ.։
Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրվում է քաղաքատնտեսական և ընկերավարչական խնդիրներով, Զոմբարտի 10 կ.։
Գումարով գնողներին զեղչում է լինում։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. Галустяну. 1—2

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ
Մարտի 5-ին
Հայ թատերասէրաց խումբը կը ներկայացնէ
I
ՔԱՆԴՎԱԾ ՕՋԱԽ
Կոմ. 3 գործող. հեղ. Սունդուկեանցի
II
ՊԱՇՏՕՆՍ Է ԽՈՒՄՓԱԼԸ
Վոդ. 1 գործ. թարգ. Աւեսեանի
Մասնակցում են օր.օր. Արաքս, Նաւարդ, Զեփիւռ. պ.պ. Արմենակ, Գալուստ, Անտոնեան, Ղուշչեան, Ղազարեան, Մ. Տէր-Առաքելեան և ուրիշները։
Սկիզբն է ճիշդ 7 ժամին երեկոյեան
Խաղամիջոցներին կը նուագէ երաժշտախումբը։
Տոմսակների գները 2 րուբլուց մինչև 20 կ.
ծախվում են կասսայում։
Կարգադրիչ՝ Մ. Տէր-Առաքելեանց
1—2

Խնդրում եմ բարեգործներին օգնել ինձ մի չնչին գումարով, որով հնարաւորութիւն կը տան ինձ ուսումս շարունակելու։ Ծնողներս շատ նեղ վիճակի մէջ են և չեն կարողանում վճարել, և վարչութիւնը սպառնում է ինձ արձակել։ Նուէրները խնդրում եմ ուղղել «Մշակ»-ի խմբագրատուն։
1—2 Զքաւոր աշակերտ Ա. Գ.

ՇԵՐՄԻ ՍԵՐՄՆ
Առանձին խնամքով պատրաստված, Բաղդադի տեսակի, հետևեալ ամենայայտնի ֆիրմաների. 1) «Ն. Խրիսօգուլիդիս», 2) «Լ. Էֆօ-Ցօվիդիս» և 3) «Ա. Մարդիրիս», սրանցից առաջին երկուսը վաղուց մեծ անուն և հռչակ հանել են ինչպէս Թիւրքիայում՝ նոյնպէս և Կովկասում, Թիւրքեստանում և Պարսկաստանում։—Ցանկացողներին դիմել դրանց ներկայացուցիչ՝ պ. Վ. Ցակոբեանին, Թիֆլիս, նախկին Արծրունի գալերէյում, թիւ 127 գրասենեակը։ Հեռախօս՝ թիւ 608։ (կ.ե.կ) 3—3

Կ Ե Ֆ Ի Ր
Բժիշկներ Սօկոլովի, Գոտերստենի, Շմիտի, Բիլի և ուրիշ հեղինակութիւններից երևում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատառի, արեան պակասութեան, Չըշրուկի, (золотуха) գալիանհարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա։ Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։
(հ.կ.) 6—20

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 46—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 62—100

ԲԺԻՇԿ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նաւարկովի տանը։
(չ. ու. կ.) 12—15

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 102—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆօն № 791։ (ա. օ.) 78—150

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողների։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բոլոշևսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելեֆօն № 11.
(ա. օ.) 15—20

Փարգիտ գիւղացի (Կարսի գաւառ)
ԵՐՈՒԱՆԴ ԲՕՉԱՐԵԱՆ ՄԿՐՏՉԵԱՆԸ
չորս ամիս սրանից առաջ հեռացել է գիւղից և այնուհետև չի վերադարձել. Խնդրում եմ նրա մասին որ և է տեղեկութիւն ունեցողին յայտնել ինձ նրա ուր լինելը հետևեալ հասցէով՝ ст. Башъ-Кядикляръ, сел. Паргитъ Кочару Микиртичеву. 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսական հիւանդութիւնների վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին ցերեկվայ 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա Սեմեօնօվսկի փողոց № 20։
(ա.օ.) 3—10

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 12 ր. գիշ.
Ալեքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալեքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1906 Թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
I. եր. Օրացոյց—կազմեց Ն. ք. Նիկողոսեան. ընտիր մտքեր. առածներ. հանելուկներ, շուտասելուկներ II, երես. 1) Ոսկի դարի շուրջը—Ալաքի, 2) Նշմարներ Հայաստանի աշխարհագրութիւնից—Մ. Վ. Քոչարունու, 3) Օրվայ հարցեր—Բժ. Ա. Բուդաղեանի, 4) Ինչպէս օգնել կարծեցեալ մեռածներին բժշկ. Բ. Նաւասարդեանի, 5) Առողջապահական գիտելիքներ—Դ-ր Բեկլամի, 6) Կինը և տղամարդը—Տիկ. Հրանոյշի, 7) Հրատապ հարցերի շուրջը—պրոֆ. Վ. Զոմբարտի, 8) Քաղաքատնտեսական զրոյցներ—Ե. Թոփչեանի, 9) Ինչպէս են խարդախում մեր սնունդը—Քիմիկոս Կ. Արովեանի, 10) Ինչպէս են խմորեղէններ պատրաստում—Մօլօխովեցի, 11) Ինչպէս են քաղցր խմիչքներ պատրաստում, 12) Երեխաներին ինչով պէտք է կերակրել—Դոկտ. Կ. Փաշայեանի. 13) Տէրսիմ և տերսիմցիներ—Անդրանիկի. 14) Եւրոպացիների կարծիքը հայերի մասին—Ե. Թ., 15) Հսկայ կենդանիներ—Վ. Լունկևիչի, 16 Զարմանալի բոյսեր—Ա. Քիշմիշեանի, 17) Կայծակ և ելեքտրականութիւն— Վ. Լունկևիչի, 18) Հողը և նրա տեսակները—Գ. Ղազարեանի, 19) Ինչպէս պէտք է հաւ պահել—Բօմէրի, 20) Հոգեշահ զրոյցներ—Պետրով քահ., 21) Թիւրքահայերի վարչական կազմը, 22) Րաֆֆու յիշատակարանից, 23) Տարօրինակ գիւտեր, 24) Գիտական խաղեր. 25) Թուաբանական խաղեր ու խնդիրներ, 26) Ընտիր հատուածներ, 27) Հայկական պատմ. էջերից, 28) Օգտակար խորհուրդներ, 29) Վանայ երգերից, 30) Զուարճալի հատուածներ, 31) Հետաքրքրական, 32) Ժողովրդական երգերից. 33) Աշուղական հարցումներ, 34) Բանաստեղծական նշմարներ, 35) Նմուշներ Օտ. բանաստեղծութիւնից, 36) Մեծաղի աշխարհից, 37) Որոնք են մարդու 3 պարտականութիւնները, 38) Րաֆֆու գրուածքներից ո՞րն է ամենալաւը, 39) Ի՞նչ է երջանկութիւնը և ինչպէս գտնել նրան, 40) Այլ և այլք։
Տախտակ «Ռուսահայ խմբագիրներ» Առանձին յաւելուած գրքոյկ «Ժողովածու» (1. Արձակ բանաստեղծութիւններ Ա. Ահարոնեանի և Վ. Փափազեանի։ 2. Նմուշներ վրաց գրականութիւնից։ 3. Մրցանակաբաշխութիւն)։ ՄՐՑԱՆԱԿ 50 կտոր գիրք։
Պատի օրացոյցի գինը 50 կոպ.։
ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
Օրացոյց Հայրապետ. ամեն. հայոց. Ազգային հաստատութիւններ.—Ն. ք. Նիկողոսեանի. Չափեր և նրանց համեմատութիւնը։ Խնայողական գանձարաններ և մարկաներ։ Բանւորների համար։ Իրաւագիտական տեղեկութիւններ։ Մուրհակ, Դրոշմաթուղթ։ Բնակարանների հարկ։ Պօստ, հեռագիր և հեռախօս։ Երկաթուղի պատւոյն ճանապարհներ։ Նուագահացութիւն։ Անցագիր։ Զինուորագրական կանոններ։ Բժշկարան. բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի. Ինչպէս են խարդախում մեր խմիչքները—քիմիկոս Կ. Արովեանի։ Ջուրը—Դոկտ. Ա. Ցակոբեանի։ Կեանք և մահ—Բժ. Ա. Բուդաղեանի։ Գիրք և առողջապահութիւն—Դոկտ. Կ. Փաշայեանի։ Մարդու զգեստը—Դոկտ. Զէյլերի։ Շաքարը արբեցողութեան դէմ—Դոկտ. Գօլովինի։ Ժամանակակից հարցերի Շուրջը։ Ինչ է բարեգործութիւնը— պրոֆ. Շմոլլերի։ Ազգայնական հարցի մասին —պրոֆ. Վ. Զոմբարտի։ Մրցման հետևանքը տնտեսական կեանքում—Ֆր. Էնգելսի։ Գիտութիւն և ինքնակրթութիւն—Ե. Թոփչեանի։ Դրամագլուխ կամ կապիտալ—պրոֆ. Կարիշևի։ Ժամանակակից կնոջ վիճակը—տիկ. Հրանոյշի։ Արիութիւն և ազնուութիւն—պրոֆ. Մանտեգացցայի։ Ինչ է փողը—Ե. Թոփչեանի։ Գիտական. Օդային ճանապարհորդութիւն—Վ. Լունկևիչի. Արևը։ Բոյսերի կեանքը—պրոֆ. Բօրօդինի։ Երկրագործական խորհուրդներ—Գ. Ղազարեանի, Զուարճալի մաթեմատիկութիւն (պատկերներով)։ Կենսագրութիւններ. Յով. Արքեպ. Արղութեանի, Սունդուկեանի, Պռօշեանի և Շիրվանզադէի։ Օգտակար հասցէներ։ Տնային խորհուրդներ։ Գիտական նորութիւններ։ Օգտակար գիտելիքներ։ Հետաքրքրական։ Ծիծաղաշարան։
Գրպանի օրացոյցի գինը 20 կոպ.։
Գումարով գնողներին զեղչ։
Սեղանի «Լոյս» օրացոյց հանդէսը մեզնից անկախ պատճառով այս տարի լոյս չէ տեսել։ «ԼՈՅՍ» ՀԱՆԴԻՍԸ ԱՄՍԱԳԻՐ դարձնելու համար՝ դիմում է արժան պաշտպանող իշխանութեան։
Դիմել՝ Тифлисъ Мадатовская ул. 5. Е. Топчяну. 10—10

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15